№ 91 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՄԱՅԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 1 ՄԱՅԻՍԻ № 91

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենվեղում

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.
Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ „ՄՇԱԿԻ“

Գաւառներից մեզ ուղղակի ամբակոծում են և խնդրում, որ հնարաւորութիւն տանք աւելի շատ տարածելու մեր լոյս ընծայելիք «ՄՇԱԿԻ» քառասնամեակ „Տարազի“ յատուկ Ալմանախը:

Զինանելով և թողնելով մինչև մայիսի 15-ը «ՄՇԱԿԻ» բաժանորդների համար առնական այս ալմանախի գինը 1 ռուբլի, անհրաժեշտ ենք համարում հետևեալն աղդարարելու՝

1) Նշանակվում է բաժանորդագին 1 ռ. մինչև մի որոշ ժամանակ, այն պատճառով, որպէսզի կարելի լինի մօտաւորապէս սահմանել հրատարակվելիք հանդէսի ծաւալը:

2) Ծաւալը որոշելուց յետոյ գալիս է քանակի խնդիրը. չէ որ պէտք է մօտաւորապէս գէթ իմանալ, թէ քանի օրինակ տպագրել:

3) Լոյս տեսնելուց յետոյ եռապատիկ գին է նշանակվում, որովհետև ընկի ենթարկած քանակն էլ պէտք է համեմատ վճար ունենայ, որպէսզի գէթ մի երբորդականը վճարվի:

Սրանք տարրական կանոններ են, բայց մեր հայերի համար ժամանակ, սահման, ծաւալ գոյութիւն չունենալու պատճառով առաջ են գալիս և նման պատնէշներ:

Ուրեմն ով ցանկանում է բաժանորդագրվել ՅՕԲԵԼԵԱՐ «ՄՇԱԿԻ» քառասնամեակ ալմանախին, թող աճապարէ բաժանորդագրվել փոթով: Կրկնում ենք, մայիսի 15-ից յետոյ դարձեալ 2 ռուբլի:

Նրանք, որոնք ուղարկել են 2 ռ., կարող են յետ ստանալ 1 ռուբլին:

Հասցէն՝ БЮРО ПЕЧАТИ. ТИФЛИСЪ. Головинскій пр., 41.
(ա. օ.) 26. 2—1

«ԼԵՌՆԻՅ ԹԱՏՐԸ», Михайловскій пр. № 65.
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ
Հինգշաբթի, մայիսի 3-ին տեղի կունենայ
ԶԲՕՍԱՆՔ-ՋԱՆԳԻԼՈՒՄ
շքեղ ծրագրով և մանկական առանձին բաժնով:
ՊԱՐԵՐ եւրոպական և ասիական:
Սկիզբը ճիշդ ցեր. ժամը 3-ին: Մուտքը մեծերին 25 կ., իսկ երեխաներին և աշակերտներին 15 կոպ.:
(հ.) 299. 2—1

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԱԼՄԱՆԱԽ (№ 4 «Տարազ»)
Ծոխ և բազմաբովանդակ, գինն է 2 ռ., ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» ալմանախի բաժանորդների համար ՄԷԿ ռուբլի:
Դիմել՝ БЮРО ПЕЧАТИ. ТИФЛИСЪ, Головинскій пр., 41.
(հ. հ. շ.) 26. 5—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕՒ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Դօլ. պր. 21, տուն Արտիստական Ընկ., տէլէֆօն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ ընտիր պատասխան ամենավերջին տիպով,
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր բուրօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶՐԻ:
(հ.ու) առ. 154. 50—5

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համալի Մատահաթեիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կոպ.
(Ճանապարհածախսով՝ 38 կոպ.)
Այս գրքի վաճառուսից գոյանալիք գումարը յատկացվում է «ՄՇԱԿԻ» ապահովութեան ֆոնդին:
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ“, կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak“.

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
ՊՐՕՖԷՍՕՐ ՊՕԶՆԷՐԻ ԱՍԻՍՏԵՆՏ
Խորհրդակցական կաբինետ Բերլինում:
Ընդունում է միզասեռական (վենէրական) հիւանդներին: Նաև կոնսուլտացիա միս մասնագիտութիւնների:
Հասցէն՝ D-r Muradoff, Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon Amt Norden 113—19.
(ե.հ.կ.) առ. 242. 12—9

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին և երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանձակայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(ե.հ.կ.) առ. 819. 100—94

«ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մենք կոչ արինք հայ ժողովրդին «Մշակի» 40-ամեայ յօբելէանի առիթով հիմն դնել «Մշակի» ապագայ գոյութեան ապահովութեան և յարատևութեան, կազմակերպելով յատուկ ֆոնդ իր յօժարակամ նուէրներով, լումաներով և կոպէկներով:

Հայ ժողովուրդը, երկրագնդի զանազան ծայրերից, ուր նա բնակութիւն ունի, արտայայտեց «Մշակին» իր համակրութիւնը, դրուատեց նրա կատարած ծառայութիւնը, նրա բեղմնաւոր գործունէութիւնը և դրանով վկայեց, թէ «Մշակը» ուղիղ ճանապարհի վրա է եղել կանգնած ամբողջ ժամանակ:

Բայց մենք, «Մշակի» գործողները և նրա սպասաւորները, կը ցանկայինք, որ «Մշակը» կարողանար աւելի լիօրէն կատարել այն, ինչ նա տեսնում էր, ինչ անհրաժեշտ է հայ ժողովրդի մտաւոր-կուլտուրական և հոգևոր-բարոյական զարգացման համար:

Անկեղծ համակրութեան և գնահատութեան արտայայտութիւնները հայ ժողովրդի կողմից մեզ, «Մշակի» ղեկավարներին և աշխատողներին, ապրիլիւն և ոգևորութիւն կը ներշնչեն աւելի մեծ թափով, աւելի մեծ եռանդով առաջ տանել գաղափարական այն գործը, այն պայքարը, որ մենք կատարեցինք և մղեցինք 40 տարիներ:

Սակայն որպէսզի «Մշակը» կարողանայ լիապէս կանգնած լինել իր կոչման բարձրութեան վրա, որպէսզի նա կարողանայ մատակարարել հայ ժողովրդին մտաւոր-հոգևոր-բարոյական առատ և ընտիր սնունդ, նա պէտք ունի տարածել իր թևերը աւելի լայն, նա պէտք ունի ընդարձակել իր գործունէութիւնը:

Ամբողջ տարիներ մենք ակնատես ենք, մենք հալ ու մաշ ենք լինում, տեսնելով թէ ինչպէս յաճախ բազմաթիւ գեղեցիկ և ընտիր յօդուածներ, բանասիրականներ և ուսումնասիրութիւններ, պատմական տեսութիւնները կամ շատ ուշ են տպվում, կամ մնում են չը տպված, տեղի սղութեան պատճառով. հետաքրքրական և գեղեցիկ յօդուածներ, մենք ստիպված ենք լինում երկար ժամանակ պահել, պարզապէս տեղի սղութեան պատճառով, որովհետև օրվայ հերթական և տագնապալի հարցերը այնքան շատ են լինում, որ յաճախ «Մշակի» էջերը լցվում են քաղաքական և այլ լուրերով, հեռագիրներով, և տեղ չէ մնում մեծ և մշակված յօդուածների համար:

Եւ այդ հողի վրա մենք շարունակ ունենում ենք թիւրիմացութիւններ, դժգոհութիւններ մեր աշխատակիցների կողմից, որոնց եռանդը սառչում է, տեսնելով որ իրանց մտքի ծնունդը ուշ կամ երկար ընդմիջումներով է լոյս տեսնում: Եղել են նոյնիսկ աշխատակիցներ, որոնք այդ պատճառով դադարել են աշխատակցելուց:

Ամբողջ տարիներ մենք տեսել ենք, թէ որպիսի մեծ պահանջ և կարիք կայ մի գրական-գեղարուեստական յաւելուածի, որ պարբերաբար տրվէր «Մշակի» ընթերցողներին, գրական-քննադատական բովանդակութեամբ:

Ամբողջ տարիներ մենք ցաւ ենք զգում, անկարող լինելով քննադատականներ տալ բոլոր երևացող գրքերի և հրատարակութիւնների մասին:

Ամբողջ տարիներ մենք ցաւ ենք զգում, որ չենք կարողանում հօնօրարի գաղափարը, աշխատակիցներին, թղթակիցներին վարձատրելու գաղափարն իրագործել այն չափով, ինչ չափով ցանկալի էր, և դարձեալ լինում են դէպքեր, երբ հէնց այդ պատճառով հեռանում են մեզանից աշխատակիցներ, որոնք հնարաւորութիւն չունեն ձրիաբար աշխատելու:

Ի հարկէ, այս բոլոր թերութիւններով հանդերձ, «Մշակը» ամբողջ հայ մամուլի մէջ եղել է միակ օրգանը, որ ամենից շատ տեղեկութիւններ է տուել հայութեան զանազան տարաբնակ հատուածների մասին. ոչ մի թերթ չէ ունեցել այնպիսի կանոնաւոր, պարբերական թղթակցութիւններ Թիւրքիայից, Պարսկաստանից և այլ տեղերից, ինչպէս «Մշակը». ոչ մի թերթ այնքան չէ զբաղվել գաւառական կեանքով, հայ ժողովրդի ուսումնասիրութեամբ, ինչպէս «Մշակը»:

Բայց հասել է ժամանակը, որ վերոյիշեալ բոլոր թերութիւնները վերացվեն. հասել է ժամանակը, որ հայ ժողովուրդը ունենայ յանձին «Մշակի» մի ազգային-առաջադիմական մեծ թերթ, որ նոյն դերը կատարէ հայերի համար, ինչ դեր կատարում է, դիցուք, «Рус. Вѣд.» թերթը ռուսների համար, ի հարկէ, համեմատական չափով:

Իսկ դրա համար հարկաւոր է, որ հայ հասարակութիւնը օգնութեան գայ:

Անցեալ անգամ ասացինք, որ հայ թերթը զրկված է այն միակ նշանաւոր եկամտի աղբիւրից, որով պահպանվում, ծաղկում, բարգաւաճում են բոլոր երկիրներում լրագիրները: Այդ աղբիւրը—յայտարարութիւններն են: Հայ թերթին յայտարարութիւն չեն տալիս: Վերցրէք մեր բոլոր հայ առևտրական, արդիւնաբերական, բանկային հաստատութիւնները և դուք կը տեսնէք, որ նրանք ամեն տարի հարիւրներ, հազարներ են ծախսում յայտարարութիւնների, հաշիւների տպագրութեան համար բայց, հայ թերթերին լնում են գոնէ մի 10 ռուբլու յայտարարութիւն տալ: Եթէ «Մշակը» ունենար գէթ մի տասներորդ մասը այն եկամտի, որ ստանում է, դիցուք, մի եւրօպական թերթ, նա ապահոված կը լինէր:

Միայն մի տարի մենք փորձեցինք մեծացնել, «Մշակի» ծաւալը, 1907 թ., և մենք ընկճվեցինք ահագին դեֆիցիտի ներքոյ:

Ուրեմն պետք է կազմել մի հրատարակչական ֆոնդ, որպիսին ձեռնարկել է Յօբել. Ցանձնաժողովը:

Եւ այդ ֆոնդի համար անհրաժեշտ գումարը պէտք է տայ հայ ժողովուրդը, «Մշակին» համակրող, «Մշակի» գոյութիւնը անհրաժեշտ համարող հայ ժողովուրդը:

Նա, հայ ժողովուրդը, իր ռուբլիներով, կոպէկներով պէտք է և կարող է ստեղծել, ինչպէս չէիս ժողովուրդը միայն իր կոպէկներով ստեղծեց իր ժողովրդական մեծ թատրոնը և վրան մակագրեց՝ «Ժողովրդի կոպէկներով ստեղծվեց այս թատրոնը»:

Թող ժողովրդի կոպէկներով ստեղծվի «Մշակի» ֆոնդը:

«Մշակի» հիմնադիրը և նրան յաջորդող դեկավարները կատարեցին՝ ինչ կարող էին, կրելով 40 տարվայ ընթացքում նիւթական-բարոյական ահագին զրկանքներ, հալածանքներ, նեղութիւններ: Նրանց գործը հայ ժողովրդի առաջն է: Թող այժմ այդ ժողովուրդը առաջ գայ և ստեղծէ նրա ապահովութեան ֆոնդը:

Եւ եթէ «Մշակի» ամեն մի ընթերցող, ամեն մի բաժանորդ իր շրջանում տարածէ այդ գաղափարը, ընդունէ յօժարակամ նուէրներ և հասցնէ Յօբելեանական Ցանձնաժողովին, մենք համոզված ենք, որ գործը գլուխ կը գայ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 և 29 ապրիլի

Թէմիր-Խան-Շուրա.— Նահանգապետը Փոխարքայից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Ուրախ եմ հաղորդել Դաղստանի ազգաբնակութեանը Կայսրի տորոն բերված հեռագիրը. «Հաղորդեցէք Դաղստանի ազգաբնակութեանը Իմ անկեղծ շնորհակալութիւնը Ինձ արտայայտած զգացմունքների համար: Ցաղում եմ աչողութեան լաւագոյն բարեմաղթութիւններ Դաղստանում բացված գիւղատնտեսական ցուցահանդէսին: Թող Աստուած օգնէ հարուստ երկրի խաղաղ զարգացմանը: ՆԻԿՕԼԱՅ»:

Լիվադիա.—Պաշտօնական Կայսերական Պալատի մինիստրի հեռագիրը. «Այսօր, կիրակի, Լիվադիայի պալատական եկեղեցում պալատական հոգեւորականութիւնը մատուցեց պատարագ, որին ներկայ էին Նոցին Մեծութիւնները Օգոստափառ Զաւակների հետ և պաշտօնական անձինք: Պատարագից յետոյ Պալատի մեծ սեղանատունը եղաւ նախաճաշ»:

Սեվաստոպոլ. — Բոլգարական պատուիրակութիւնը մեկնեց Օդեսա:

Պետերբուրգ.—«Русск. Инвалидъ»-ում տպված զինուորական մինիստրի հրամանի մէջ ասված է, թէ արտիլերիական բատարէաներից մինի ռազմական գնդակաձգութեան ժամանակ հետևակ գնդերի հետ՝ գնդակները կպան հետևակ գնդերի առաջնթաց մասերին, ուր վիրաւորվեցին 42 զինուոր: Այդօրինակ դժբաղդ դէպքերի առաջն առնելու համար անհրաժեշտ է, որպէս զի ռազմի գնդակաձգութեան ժամանակ բոլոր նախնական զգուշութիւնները երկուսաթեք ձեռք առնված լինեն:

Պետերբուրգ.—Բարձրագոյն Պետական Խորհրդի անդամ սենատոր Մանուխինին յանձնարարվեց քննել այն հանգամանքները, որոնք առաջ բերին գործադուլ Լէնայի հանքերում:

Նովոչերկասկի դատաստանական պալատի դատախազ Պոպովսկին յանձնվեց հսկել «Դաշնակցութեան» գործի մէջ երևան հանված փատաթղթերի կրստեան և խարդախութեանց քննութեան կատարման վրա:

Պետրոս-Պողոս տաճարի նոր գերեզմանոցում հողին յանձնվեց Լէյլէնբերգի դուքս իշխան Բոմանովսկիի աճիւնը:

Լօնդոն.—Իսանդի դերձակները նոյնպէս գործադուլ արին: Զէն աշխատում 30,000 մարդ:

Լօնդոն.—Նաւաշինարարական բանուորները պահանջում են աւելացնել աշխատավարձը հինգ տոկոսով:

Վիէննա.—Բոլգարական թագաւորը, թագուհին, դահաժառանգը մայիսի վերջերին այցելելու են Վիէննայի պալատը:

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, կոմս Բերտհոլդը մայիսի սկզբին գալու է Վերդին և ընդունվելու է կայսրից:

Վիէննա.—Լրագիրները հաղորդում են, որ չերնոգորական թագաւորը յունիսի սկզբին այցելելու է աւստրիական կայսրին:

Լվով.—Լեհական ուսանողները կազմեցին բողոքի ցոյց Խօլմշչինան անջատելու դէմ: Մի քանի հազար մարդուց բաղկացած ամբոխը դիմեց դէպի ռուսական հիւպատոսարան, բայց հանդիպեց ոստիկանութեան դիմադրութեան, որ հարկադրված եղաւ գործել զէնքով: 20-ից աւելի ցուցարար վիրաւորվեցին, որոնցից 8-ը ծանր, 10 հոգի կալանաւորվեցին: Ցետոյ ցուցարարները դիմեցին «Прикарпатская Русь» լրագրի խմբագրատան կողմը, ուր տակն ու վրա արին սենեակներից մինի կարասեղէնը և ջարդեցին պատուհանները:

Մադրիդ.—Երէկ պլատը 180 ձայնով 73-ի դէմ Կանալէխասին վստահութիւն յայտնեց:

Տանժէր.—Եկաւ գեներալ Լիոտէն:

Մէլիլիա.—Երէկ բազմաթիւ մաւրիտանական զօրամասեր, անցնելով Կերա գետը, յարձակվեցին սպանացիների վրա, բայց յետ մղվեցին: Սպանացիք գրաւեցին մաւրիտանական դիրքերը:

Մէլիլիա.—Դարկիների յարձակման ժամանակ սպանացիք կորցրին մի կապիտան և երկու զինուոր սպանված և մի վիրաւոր:

Վաշինգտոն.—Պետական դեպարտամենտի տեղեկութեան համաձայն, ապրստամբութիւնը Արևելեան Մէքսիկայում աճում է: Շատ տեղերում կռիւ է:

Մազագան.—Մարակուշից տեղեկացնում են, թէ իբր շէրիֆի զօրքերը շրջակայքում Դուռը կողոպտող ցեղերի հետ ընդհարվելու ժամանակ խոշոր կորուստներ են ունեցել: Իբր թէ սպանվել են 100 հոգի:

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 և 29 ապրիլի

Բերլին.—Բիւջէտային մասնաժողովի մէջ ծովային մինիստրը յայտնեց, որ գերմանական ծովային սպառազինումները կրում են բացառապէս պաշտպանական բնաւորութիւն:

Բէյլստագում կենտրօնի պատգամաւոր Տրէնդել յայտնեց, որ Անգլիան և Գերմանիան խոշոր ծաւալով լրտեսութիւն են կազմակերպել: Պատգամաւորը առաջարկում է շուտով մի օրէնք հրատարակել լրտեսութեան և ծանր պատիժներ սահմանելու մասին:

Դէնուա.—Վիլհէլմ կայսրը մեկնեց Կարլսրուէ:

Կարլսրուէ.—Եկան պետական կանցլերը, Կիդերլէն-Վեխտերը և Մարշալ ֆօն Բիբերշտէյնը:

Կարլսրուէ.—Կայսրը նորից ընդունեց կանցլերին:

Գերմանական կայսրի Դէնուա անցնելու ժամանակ իտալական թագաւորը և կայսրը փոխանակեցին բարեկամական հեռագիրներ:

Երէկ կայսրը լսեց Մարշալ ֆօն-Բիբերշտէյնի զեկուցումը. երեկոյեան ունկնդրութեան ընդունեց կանցլերին և Կիդերլէն-Վեխտերին:

ՀԵՌԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 և 29 ապրիլի

Մուկդէն.—Պէկինից ուղարկված պատուէրի համաձայն՝ միապետական կազմակերպութիւնների գործունէութիւնը Մանջուրիայում արգելված է: Նրանց պարագլուխների վրա սահմանված է գաղտնի հսկողութիւն:

Դիրին.—Ապստամբված երկու վաշտ

Պանշիսիան քաղաքում գրաւելով զէնքերը հեռացան քաղաքից. նրանք սկսել են կողոպուտով զբաղվել շրջակայքում։ Զսպելու համար ուղարկվում է մի գունդ կանոնաւոր զօրք։

—

Կուլջա.—Ցղինսոյի մօտերը գենեռալ Եանշունլինի զօրքերը ջարդեցին մոնգոլներին։

Սուլդուներից ուղարկված ռազմամթերքները մոնգոլները կողոպտում են։

—

Տօկիօ.—Չինաստանում գտնվող եապոնական զօրքերի հրամանատար գեներալ Սատօն մեկնեց Պէկին։

Սկսվել են պարլամենտի ընտրութիւնները։ Կառավարութիւնը ամեն միջոցներով խափանում է ընտրողներին կաշառելու փորձերը։

—

Զիֆու.—Ռոճիկները չը տալու պատճառով ապստամբվեց զօրքերի մի մասը։ Երեք դրդիչներ գնդակահարվեցին։

Ապստամբութիւնը Իւնշինում և Վուտէնում ճնշվեց։

—

Կաշգար.—Քաղաքում հանդիստ է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 ապրիլի

Թաւրիզ.—Սալմաստ եկան քիւրդական ցեղերի պարագլուխները, որոնք յայտնեցին, թէ այսուհետև իրանք պատրաստ են ծառայել պարսից կառավարութեանը։

Թէհրանից Զէնջանի նահանգապետ նշանակված անձը, հասնելով մինչև Ղազվին, Շուլա-ուդ-Դովլէին հեռագրով խնդրեց փամփուշտներ ուղարկել։ Շուլան անկարող եղաւ կատարել նրա խնդիրը փամփուշտներ չունենալու պատճառով։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 ապրիլի

Կ. Պոլիս.—Իփէկից ստացվել են յուզիչ տեղեկութիւններ ալբանների հակաթիւրքական լուրջ շարժման մասին։ Չը դադարող ալբանական շարժումը, համաձայն լուրերի, պէտք է բռնկվէր ապրիլի 23-ից յետոյ։ Բայց երեւոյթին գուշակութիւնը կատարվում է։ Իփէկում մի շարք յարձակումներ են տեղի ունեցել կառավարական շինութիւնների վրա։ Ներքին գործերի մինիստրը, որի կեանքի դէմ կատարվեցին մի շարք մահափորձեր, եկել է Մօնաստիր և այնտեղից գնալու է Իփէկ։ Ալբանները պահանջում են իրանց հա մասնակից անել այն արտօնութիւններին, որ անցեալ տարի տրվեցին մալիսորներին։ Միաժամանակ սաժեղանում է բօլշարական հրատակխմբերի գործունէութիւնը։

Բ. Դուռը վճռեց հնարաւոր զիջումները անել ալբաններին։

Դարդանէլում պայթեց ափ քաշած ականներից մէնը։

—

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս յայտարարվեց, որ ականների $^2/_3$-ը Դարդանէլում որսված է։

Ալբանիայի անկարգութիւնների մասին տրված պաշտօնական հաղորդագրութիւնից երեւում է, որ տեղի են ունեցել մի քանի ամենայն յարձակումներ Գուսինի կողմում գիւղերի և ժանդարմների վրա. զօրքերը արագութեամբ ճնշել են անկարգութիւնները։ Իփէկում կարգ ու կանոնը վերահաստատված է։

—

Հոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է «Բերլ. Յայտ.»-ի այն տեղեկութիւնը, թէ Բոգոսի և Եգէյեան ծովի միւս կղզիների գրաւումը տեղի ունեցաւ անգլո-իտալական համաձայնութեամբ։ Բոգոսը իտալացիք գրաւեցին վերջնականապէս։ Չէզոք պետութիւնների շահերի պաշտպանութեան համար ամեն անգամ առանձին թոյլտուութիւն է տրվում շոգենաւերին մտնել Բոգոսի նաւահանգիստը իտալական զօրքերի հրամանատարների ղեկավարութեամբ ու հսկողութեամբ։

—

Հոմ.—Մովական Վիալէն հաղորդում է, որ Կարպատոս և Կասոս կղզիների վրա ծածանվում է իտալական դրօշակ։ Ցիշեալ կղզիների թիւրք զօրամասերը և քաղաքացիական պաշտօնեաները գերվել են։ Նոյնպէս գերի է ընկել Եպիսկոպի և Նիսիրոս կղզիների քաղաքացիական իշխանութիւնները և զօրամասերը։

—

Տարէնտ.—Բոգոս կղզուց բերվեցին վալին և այլ թիւրք զօրականներ։

—

Լօնդոն.—Կառավարութեանը պաշտօնապէս դեռ ևս չէ հաղորդված թիւրքական հակա-առաջարկութիւնները Բաղդադի երկաթուղու մասին. այսուամենայնիւ Գրէյի և թիւրքաց դեսպանների միջև վարվում են բանակցութիւններ, վերաբերեալ մի շարք գլխաւորապէս տեխնիկական պահանջներին, որ ներկայացրել է թիւրքաց կառավարութիւնը ի պատասխան 1911 թ. յունիսին եղած անգլիական հաղորդագրութեան։

—

Օդեսսա.—Անգլիական լլոյդի գործակալը Կ. Պոլսից հեռագրում է, որ 204 բեռնաւորված շոգենաւ Սև և Ազով ծովերից կը սկսեն անցնել Դարդանէլով վաղը, որ կը տեւէ մի քանի օր։ Այնուհետև կը սկսեն անցնել Սև և Ազով ծովերը մտնող շոգենաւերը։

—

Սալոնիկ.—Հրաման տրվեց կատարել երկու զօրաբանակների զօրաժողով։ Զէնքի են կանչվում Բումէլիայի և Փոքր Ասիայի պահեստի զինուորները։

—

Սալոնիկ.—Օպոզիցիայի թեկնածու ալբանական յայտնի պատգամաւոր Հասան-բէյը փախաւ լեռները։

—

Սոֆիա.—Մակէդոնիայի դրութեան առիթով կայացած բազմաքանակ միտինգը որոշեց պնդել, որպէսզի կառավարութիւնը վճռականապէս գործէ յօգուտ աւտօնոմիայի իրագործման՝ համաձայն Բերլինի դաշնագրի։

—

Բելգրադ.—Իփէկի, Պրիզրէնի և Դիակովոյի շրջակայքում սկսված ալբանական շարժմանը պաշտօնական շրջանները տալիս են առանձին նշանակութիւն, համաձայն այդ ապստամբութիւնը չափազանց լուրջ է պատվում, որ ապստամբութեան տարածման դէպքում սերբական կառավարութիւնը մտադիր է պատերազմական միջոցներ ձեռք առնել արևմտեան սահմանում։

—

Բերլին.—Կ. Պոլսում գերմանական դեսպան վերջնականապէս նշանակվեց Վահէնհէյմը։

ՄԱՐՏԻՐՈՍ ՄՆԱԿԵԱՆ

II *)

Թիֆլիսում 1879-ին թատրոնական գործը դրվել էր հաստատուն հիմունքների վրա։ Թիֆլիսի հայ մշակական դերասանական խմբի մէջ կային նաև օր. օր. Աստղիկ և Սիրանոյշ քոյրերը և Պետ. Ադամեան։ 1880 թ. Պոլիս է գալիս Թիֆլիսից թատրոնական վարչութեան անդամ Սրգար Յովհաննիսեանը և հրաւիրում է տ. Հրաչեայի և Գարագաշեան քոյրերի հետ Մնակեանին։

Այդպիսով հայ բեմական արուեստի գրեթէ բոլոր ակնաւոր գործիչները կենտրոնանում են Թիֆլիսում, և իրաւամբ այն ժամանակ Թիֆլիսի հայ դերասանական խումբը համարվում էր առաջինը։ Գլխաւոր ղեկավարն էր Իշխան Ամատունին։

Թիֆլիսում Մնակեանը, սկիզբներում յուսահատված հայ հասարակութեան չափազանց խիստ պահանջներից և վերաբերմունքից դէպի բեմական գործիչները, վճռում է փախչել հայրենիք՝ Պոլիս և դաղտագողի մեկնում է Փօթի, սակայն նրան սահմանից վերադարձնում են և ոռճիկն էլ աւելացնում։ Այդ ժամանակից սկսվում է Մնակեանի մեծ աջողութիւնը և հասարակութեան խանդավառ ընդունելութիւնը ամեն անգամ, երբ նա բեմ է երեւում։ Առաջ-առաջ տեղում են դրամներն ու նուէրները։ Մնակեանին նուիրված մի ձօնի մէջ կայ և հետեւեալ տունը։

Այո, արժան էք, հանճար Մնակեան,
Վայելել առատ մեր սէրն ու զրկանք,
Կը սիրենք ըզձով սիրով հարազատ,
Ըզձով հայկական մեր թատրոնին զարդ։

Թիֆլիսում թատերաշրջանը վերջանալուց յետոյ Մնակեանը մեկնում է ամառը Պոլիս, իսկ 1881—1882 թ. թ. Թիֆլիսում Մնակեանը նոյն աջողութեամբ նուէրներով և դրամական նպաստներով աւարտում է թատերաշրջանը։ Հէնց այդ շրջանում նա հեղինակել ու երգել է մի ժամանակ շատ տարածված «Հերիք որդեակ» երգը, եղանակը վերցնելով «Լէբլէբիջի» օպերետից։

Պայմանաւորված եռամեայ շրջանը լրացնելուց յետոյ Մնակեանը վերադառնում է Պոլիս։ Նա մինչև հիմա էլ առանձին հեւացումով է խօսում Կովկասում ունեցած իր թատրոնական գործունէութեան մասին և գովաբանում կովկասահայերի եռանդն ու ոգեորութիւնը դէպի մայրենի բեմը, նաև առանձին երախտագիտութեամբ և գովասանքով յիշում է դերասաններ Ամիրիկեանին և Զմշկեանին, որոնց համարում է Կովկասի հայ բեմի հիմնադիրներ։

1882 թ. հոկտեմբերի վերջից սուլթան Աբդիւլ-Համիդի կարգադրութեամբ Վարդովեանի խումբը պալատ է հրաւիրվում. Մնակեանն էլ նշանակվում է խմբի պետը՝ ղեկավարը։

Այդ շրջանում Մնակեանը սկսում է օպերետների սեզօնը. ինքն էլ մեծ աջողութիւն է ունենում «Լէբլէբիջի» և «Արիֆին Հիլէսի» օպերետներում, կատարելով Լէբլէբիջիի և Արիֆի դերերը։

Մնակեանը իր օպերետային խմբով անցնում է Եգիպտոս, ուր գտնում է շատ լաւ ընդունելութիւն և մեծ աջողութիւն։

Դերասանութեան հետ միաժամանակ Մնակեանը զբաղվում էր նաև թատերական երկերի թարգմանութեամբ։

Նա ունի 200-ից աւելի թարգմանութիւններ՝ կոմեդիաներ և դրամաներ բոմանտիկ գրականութիւնից։

Մնակեանը յետագայում նշանակվում է պալատական խմբի բեժիսեր, սակայն ներքին ինտրիգներն և մատնութիւնները սատիկ չլատում են ամենի և նաև Մնակեանի եռանդն ու կորովը, թատրոնական գործը սկսում է կաղալ, համիդեան ցենզուրան սկսում է իր աւերածութիւնները կատարել պիէսների մէջ, ամեն բանի յորդորիչն ու վճռողը լինում է կաշառը...

Այդ ծանր շրջանում Մնակեանը դառնորէն կրկնում էր. «Մուրալը կամ անօթութենէ մեռնիլը այս վիճակէն հազար անգամ նախամեծար է. բայց ինչ օգուտ, գործին մէջ արուեստի խենթութիւն կայ»։

Այդ ժամանակից ծայր է առնում թատրոնի անաջողութիւնների շրջանը. կազմվում են խմբեր, քայքայվում, նորից վերակազմվում և այլն։ Մնակեան ևս վեհօրէն կրում է բեմի նահատակի լուծը և Բրուսայում դերասանական շրջագայութեան ժամանակ տկարանում է և մի քանի ներկայացումներին չէ մասնակցում։ «Մանզումէի-էֆքարը» լրագրի թղթակիցը, խաբված՝ Մնակեանի ընկերներից մէկի սրած կատակից, հաղորդում է Մնակեանի մահվան մասին։ Պոլսի թիւրք, յոյն, հայ թերթերը մահվան գոյժը, կենսագրականներն են շուտ տպում։

Անթիւ ցաւակցական ու մխիթարական հեռագիրներ են տեղում Մնակեանի կնոջ և որդուն։ Մարմինը Պոլիս բերելու և փառաւոր թաղում կատարելու համար կարգադիր մանաժողով է կազմվում։ Սակայն վերջը իրողութիւնը պարզվում է և Մնակեանը յարութիւն է առնում։

Քաղաքապետ Բրդվան փաշան, սատիկ կատաղած՝ իր որդու թատերասիրութիւնից, սուտումուտ հնարով ստանում է սուլթան Համիդից Պոլսի թատրոնների փակման իրադէն։ Դերասանական խմբերը ցրվում են. կարիքից ստիպված՝ շատ դերասաններ իրանց ունեցած-չունեցածը ծախսում են հացի փող ունենալու համար։ Քաղաքապետ Բրդվան փաշան սպանվում է, նրա տեղ նշանակվում է Բէշիդ փաշան՝ թատրոնի բարեկամ։ Պոլսում թատրոնները վերաբացվում են, և դերասանները գաւառներից վազում են մայրաքաղաք։

1908 թ. օգոստոս ամսին Մնակեանը իր դերը վերջացնելուց յետոյ թատրոնից դառնալիս մթութեան մէջ բարձրից ընկնում է վայր և ոտքը լուրջ վնասում։ Բաւական ժամանակ Մնակեանը ազգային հիւանդանոցում բուժվում է հմուտ բժիշկ Զարդարեանի հսկողութեամբ։ Մնակեանի հետ պատահած այս ցաւալի դէպքը տեղական բժիշկների և լրագրների բանակռուի առատ նիւթ է տալիս։ Վերջ ի վերջոյ յաղթում է բժ. Զարդարեանը, որի վերջոյ յայտնած և մինչև իսկ նկարի վրա ցոյց տրված պատկերը Մնակեանի ոտքերի ճաքված տեղի և ուղղութեան մասին ամենայն ճշդութեամբ հաստատվում է Ռեոնտգենեան ճառագայթներով հանված լուսանկարի վրա։

Հասաւ վերջապէս ազատութեան դաբաշրջանը։ Սահմանադրական Թիւրքիայում դերասանները նոր եռանդով ու ոգեորութեամբ սկսեցին գործել, սակայն ազատութեան հետ բաղդացաւ և սիրողների թիւը, որից թատրոնական գործը սկսեց աւելի ստորանալ։

Ներկայումս Մնակեանը հայ թատրոնական գործի և թատերական գրականութեան մէջ հեղինակութիւն է համարվում։ Նա խորապէս ուսումնասիրած է եւրոպական թատերական գրականութիւնը և մանաւանդ ֆրանսիականը։ Նորագոյն պիէսների ներկայացնելու համար տրված հարցին Մնակեանը պատասխանում է. «Ոչ, բարեկամս, լաւ է, բայց սխալ է ձեր դաղափարը, ֆրանսացիք այնչափ զարգացած, նրբացած են, իրենց ախորժած ու գրած գործերը միայն իրենց յատուկ են։ Մենք տակաւին իմացական կարողութեան այդ աստիճանին չենք հասած։ Այդ տեսակ գործերով թէ ժողովուրդը կը ձանձրացնենք և թէ մենք անօթի կը մնանք»։ Երբ հարց էր տրվում հայերէն ներկայացումներ տալու, Մնակեանը պատասխանում էր. «Տիրապետող տարրը աւելի պէտք ունի գաղափարական պայքարի. անոնց պէտք է աշխատիլ։ Հպատակ տարրերու անզորրութիւնը՝ տիրապետող տարրին լուսաւորութիւնէն կախում ունի»։

Չը նայելով իր 73-ամեայ պատկառելի հասակին, Մնակեանը մինչև օրս էլ անբաժան է բեմից, շարունակ մասնակցում է ներկայացումներին և զարմանք պատճառում բոլորին իր եռանդով ու կորովով։

Իսկապէս արուեստի խենթութիւնն ու հուրը միայն կարող են կեանք ու ոգի տալ 73-ամեայ գերակատար-դերասանին։ Ունենալ 50-ամեայ բեմական գործունէութիւն ու 73 տարեկան հասակում բեմ դուրս գալ՝ այդ մի բացառիկ, եզակի երեւոյթ է մեր աղքատ թատրոնական աշխարհում։

Ահա թէ ինչու հայ բեմը յաւիտեանս կարող է պարծանքով ասել, թէ ունենք մի Մնակեան, որ 50 տարի շարունակաբար վեհորէն, առանց ընկճվելու կրել է բեմական արուեստի ծանր լուծը և մինչև իսկ 73 տարին բոլորելով ըմպում է դառնութեան բաժակը մինչև յատակը, ապացուցելու համար թէ իսկական գործիչը իր արուեստի խենթը պէտք է լինի։

Փառք և պատիւ մեծանուն դերասան Մնակեանին։

*) Տես «Մշակ» № 90.

ՆԱՄԱԿ ԶԻՆԱՍՏԱՆԻՑ

—

Կաշգար, 5 ապրիլի

Այսօր տեղիս գեն.-նահանգապետը ծամերը կարից, եւրոպական գլխարկ դրեց ու պաշտօնական կերպով հանրապետութիւն յայտարարեց։ Նա կարգադրեց հանրապետական հնգագոյն դրօշակներ բարձրացնել։

Տեղիս անգլիական և եւրոպական գեն.-հիւպատոսները գեն.-նահանգապետին այցելեցին ու շնորհաւորեցին հանրապետութեան յայտարարումը։

Նոտ չինացիներ իրանց ծամերը կտրելով եւրոպական սև գլխարկներ դրին։ Վեց արշին երկարութեամբ կտորի վրա ոսկեզօծ տառերով գրված է. «Զինաստանը ընդհանուր համաձայնութեամբ հանրապետութիւն հռչակեց. կեցցէ հանրապետութիւնը, տասն-հազար տարի ապրի հանրապետութիւնը»։

Տեղիս զինուորական վարչութիւնը չէ ընդունում հանրապետութիւնը։ Օֆիցէրները վարչական բարձր մարմինների հետ խորհրդակցում են, որպէսզի բարդութիւններ չը ծագեն, և ամեն կերպ համոզում են զինուորներին, որպէսզի հանրապետութիւնը ընդունեն։ Հակառակ պարագային՝ ապրատամբները մահով պատժվելու են։

Ախսու քաղաքի գեն.-նահանգապետին սպանել են՝ հանրապետութիւն չը յայտարարելուն համար։ Ց. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՑՕՐԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

«Մշակի» Յօրելեանական Յանձնաժողովի Բիւրօյի նախագահ պ. Ց. Սպէնդիարեանը սկսել է սառնալ Թիւրքիայի զանազան տեղերից շնորհաւորական ուղերձներ յօբելեանի օրը կարդացվելու համար։

—

Կահիրէում հրատարակվող «Հոսանք» շաբաթաթերթի մարտի 25 ի համարում կարդում ենք հետեւեալը.

«Մշակի» 40-ամեակը տօնելու համար կազմուած Յանձնաժողովին կողմէ դիմում եղած է Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչ. Ժողովին՝ որպէս զի իր նախաձեռնութեամբ տեղւոյս մէջ ալ օժանդակ մանաժողով մը կազմուի Եգիպտահայ գաղութին բարոյական և նիւթական մասնակցութիւնն ապահովելու համար կովկասահայ բազմաբդեշ օրաթերթին յօբելեանին։ Կը լսենք թէ Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութիւնը սիրայօժար ընդունած է այս առաջարկը և իր ականաւոր անդամներէն պէտք եղած յանձնախումբը կազմել ձեռնարկած»։

—

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 30 ապրիլի

«Մշակի» 40-ամեակի տօնախմբութեան Յօբելեանական Յանձնաժողովը շնորհակալութիւն է յայտնում հետեւեալ անձանց, որոնք նուիրեցին «Մշակի» հրատարակութեան ապահովութեան ֆոնդի համար հետեւեալ գումարները, այն է՝ Թիֆլիսում—1) Մի անձ, որ կամեցաւ անյայտ մնալ—երկու հազար (2000) բուբլի, 2) Ալէքսանդր Աղաֆոնէլ Մելիք-Ազարեան—մի հազար (1000) բուբլի, 3) Առևտրական Տուն Խալաթեանցներ—հարիւր (100) բուբլի, 4) Մնացական Խուդունց—հարիւր (100) բուբլի, 5) Փիթոյեան և Ը.—հարիւր (100) բուբլի, 6) Յովհաննէս Կօրգանեան—հարիւր (100) բ., 7) Առևտրական Տուն Եղբ. Եգիազարեաններ և Նազարեաններ—քսանհինգ (25) բ., 8) Լուսանկար Սմբատեան — հինգ (5) բուբլի, 9) Բազուից՝ Արշակ Քալանթարից—յիսուն (50) բուբլի, 10) Դուբօվկա աւանից, Թովմաս Մարգարեանից—քսանհինգ (25) բուբլի։ Ընդամենը մինչև այսօր նուէրներ եղել են տասներկու հազար եօթ հարիւր տասնհինգ (12,715) բուբլի։

Յանձնաժողով

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

—

Ապրիլի 27-ին, եր. ժամը 8½-ին, Գրական-Գեղագիտական Սալօնում տեղի ունեցաւ հերթական jour-fixe, նուիրված Գ. Սունդուկեանի յիշատակին։ Սալօնի մի անկիւնում դրված է հանդուցեալ դրամատուրգի մեծադիր նկարը, զարդարված տրօպիքական բոյսերով։ Ներկայ էին Գ. Սունդուկեանի յուղարկաւորութեանը մասնակցող «զարաչուխալիները» Պէչօների հանդուսանէով։ Պէչօյի դպեսն էր հագել և դերասան Գ. Միրզաեանը։ Հանդէսին ներկայ էին նաև Գ. Սունդուկեանի աւագ դուստր օր. Նինան և մեծ դրամատուրգի եղբօրորդի Ց. Սունդուկեանը իր ամուսնու հետ։ Օտարազգի հիւրերի թւում աչքի էր ընկնում ամերիկուհի դաշնակահար տ. Բաբուս-Թառումեանը։ Տիգ. Նազարեանը հանդէսը բացված յայտարարելով հրաւիրեց օր. Հումմէլին ցիտրայի վրա նուագել, որի վրա կատարված միւամազիկ նուագածութիւնը հանդիսականներին աւելի ևս թախծի մէջ ընկղմեց։ Օր. Հումմէլը նուագեց «Morgengebet» կոչված կտորը։

Սրանից յետոյ Ալ. Քալանթարը արեց մի բանախօսութիւն, որ ներկայ համարում տպում ենք առանձին։

Բուռն ծափահարութիւնների ներքոյ աւարտելով իր խօսքը՝ Ալ. Քալանթարը առաջարկեց նախագահող ընտրել։ Հանդիսականների խնդրանօք նախագահական տեղը բռնեց բժշկ. Բ. Նաւասարդեանը, որը մի քանի խօսք արտասանելուց յետոյ Գ. Սունդուկեանի յիշատակին՝ հրաւէր կարդաց յոտնկայս յարգել նրա յիշատակը, յետոյ ասաց, որ հանդիսականներից ցանկացողները խօսք առնեն և օրվայ պատշաճ խօսեն։

Առաջին խօսքը տրվեց Ց. Սօլովեանին, որը առուսերէն լեզուով մի կարճ բանախօսութեամբ ծանօթացրեց Սալօնի օտարազգի հիւրերին հանդուցեալ Սունդուկեանի գործունէութեան հետ, որպէս հայ առաջնակարգ դրամատուրգի գործունէութեան, և ապա պատմեց իր յիշողութիւններից։ Իր նախ քան այս, դերասան Միրզաեանը արտասանեց «Պէչօ» կոմէդիայից մի մենախօսութիւն։

Յար. Դասպարեանը խօսք առնելով ասաց, որ Թիֆլիսեցիները կարող են պարծենալ, որովհետև Թիֆլիսի հայութիւնը հայ գրականութեանը տուել է այնպիսի մի խոշոր տաղանդ, որպիսին է Գ. Սունդուկեանը, որով թէ ինքը և թէ բոլոր Թիֆլիսեցիները իրաւունք ունեն պարծենալու։

Գ. Լեոնեանը նոյնպէս պատմեց իր յիշողութիւններից մի երկու դէպք։

Ա. Արասխանեանը մի երկար բանախօսութեամբ յիշեցրեց հասարակութեանը, որ Թիֆլիսը Գ. Սունդուկեանից զատ հայութեանը տուել է նաև այնպիսի խոշոր բանաստեղծ, որպիսին էր Սայաթ-Նովան և բժ. Հախվերդեանը, որը բանաստեղծ չը լինելով իր կոչումով՝ հոգով բանաստեղծ էր, որովհետև տուել է հայ բանաստեղծ-աշուղների լիակատար հրատարակութիւնը, գեղեցիկ առաջաբանով։

Մ. Զմշկեանը կարդաց իր բանաստեղծութիւնը Գ. Սունդուկեանին նուիրված, իսկ վերջում իր յիշողութիւններից մի էջ, 60-ական թւականներին վերաբերեալ։

Աչքի առաջ ունենալով, որ հանդիսականների մէջ կային նաև վրացիներ, որոնց թւումն էր վրաց հրապարակախօս Իլիա Նակաշիձէն, Յար. Դասպարեանը խօսք խնդրելով՝ վրացերէն լեզուով ընտրեց Գ. Սունդուկեանին որպէս մի խոշոր դրամատուրգի, որը հաւասարապէս սիրելի էր նաև վրացիների համար, որին մանաւանդ նպաստում էր այն հանգամանքը, որ հանգուցեալ դրամատուրգն իր պիէսների տիպերը վերցնում էր Թիֆլիսի կեանքից։ Բանախօսը վերջում հրաւէր կարդաց Իլիա Նակաշիձէին խօսել, խնդրելով նախ և առաջ նախագահի թոյլտուութիւնը։

Ի. Նակաշիձէն ռուսերէն լեզուով մի բանախօսութեամբ շեշտեց այն հանգամանքի վրա, որ Գ. Սունդուկեանի նման տիպերը ներկայանում են որպէս միացուցիչ օղակներ, որոնք քանդում են ազգայնական նեղ պարիսպները և նպաստում ազգերի եղբայրութեան և համերաշխութեան։

Խ. Ք. Խուցեանը պատմեց իր յիշողութիւնները։ Ուսանող Ռատական այն միտքը արծարծեց, որ Գ. Սունդուկեանը որոշ տեսակէտից նման է Մաքսիմ Գորկիին, որովհետև նրա նման «նախկին մարդկանց՝ բօսիակների» կեանքն է պատկերացնում իր «Պէչօյով»։

Գ. Մերզաեանը կարդաց իր «Եթիմ բէյ բուլ» գրուածքը Թիֆլիսի բարբառով, մեծ ոգեորութեամբ, ապա և արտասանեց «Պէչօյից» դարձեալ մի մենախօսութիւն։

Բժ. Նաւասարդեանը մէջ ընդ մէջ պատմում էր իր յիշողութիւնները և լրացնում խօսողների ասածները իր ունեցած հետաքրքրական տեղեկութիւններով Գ. Սունդուկեանի կեանքից։

Երաժշտա-գրական բաժնում մասնակցում էին տ. տ. Վացլավակայա, բարձրեսա Մեղեմ, Սեանեան, պ. պ. Սարգարեան, Հոֆման, Գ. Վրոյը և այլք։

Գ. Վրոյը Չուլթակի վրա աջող կերպով նուագեց մի քանի կտորներ, արժանանալով ներկաների բուռն ծափերին։

Երեկոյենը վերջացաւ գիշերվայ ժամը 12-ին։

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Իմ ներկայ բանախօսութիւնը, որ նուիրված է Գաբրիէլ Սունդուկեանի յիշատակին, կը դնէ ձեր առաջ, յարգելի տիկիններ և պարոններ, միայն մի քանի ընդհանրութիւններ, առանց մանրամասնութիւնների։

Ոչ ժամանակը, ոչ երեկոյեան ծրագիրը թոյլ չեն տալիս զբաղվել աւելի հետաքրքրիչ վերլուծութիւններով։ Դա յատուկ մի դիտման առարկայ կարող է լինել մի ուրիշ անգամ։

Այսօր ես կընդգծեմ միայն ընդհանուր մի քանի կէտեր։

Գաբրիէլ Սունդուկեանը, ներկայանալով իբրև հայկական տաղանդի և հոգեկան նկարագրութիւնների ամենափայլուն արտայայտութիւններից մէկը, արժանի է խորը ուսումնասիրութեան։ Նա տուեց մեզ անմահ երկասիրութիւններ, որոնք մօտ կէս դար շարունակ հասարակական-կրթական գործ կատարեցին մեզանում և դեռ ևս պահպանում են ժամանակակից հետաքրքրութիւն, իսկ երբ նրանք կը կորցնեն ժամանակակցութեան տարրերը, դարձեալ կը մնան

կանգուն իբրև մեր թատերական գրականութեան առաջին շրջանի հրաշակերտները, իբրև կոթողները, որոնց հմայքը կոգևորի յետնորդներին առաջ ընթանալ մի անգամ բացած բեղմնաւոր ճանապարհով։

Գաբրիել Սունդուկեանը մեր գրականութեան ամենաթանգագին և հաղուագիւտ դանձերից մէկն է, մեր հասարակական կենցաղագրութեան առաջնակարգ հեղինակներից մէկը, մեր մասաղ դրամատուրգիայի նոր ուղղութեան հիմնադիրը, նրա անմոռացելուն ասողը և նրա մշտական անմահ պարծանքը։

Սունդուկեանը հանդէս եկաւ իբրև մեր հասարակական կենցաղի կենդանագրող։ Եւ իբրև այդպիսին նա կատարեց անզուգական մի խոշոր գործ։

«Պէշոյի», «Քանդած օջախի» հեղինակը հայ գեղարուեստական գրականութեան զօրաւոր սիւներից մէկն է։

Իբրև լաւ գիտակ իրական կեանքի, իբրև խոր դիտող այն երևոյթների և այն անձնաւորութիւնների, որոնք գործում են կեանքի մէջ, նա կախարդական հիացում առաջ բերեց մարդկանց մէջ, երբ բեմ դուրս բերեց կեանքի հարազատ նկարագիրներ և հոգեբանական մարմնացումներ։

Նրա պիէսների մէջ գործող հերոսները իրանց կենսական հարազատ գծերով և իրական յոյզերի ու շփումների արտայայտութիւններով դնում են մեր առաջ մի կենդանի թանգարան, որի հաւասարը ոչ ոք Սունդուկեանից առաջ չէր տուել մեզ։

Ունենալով շատ մեծ և խոր ծանօթութիւն մեր իրական կենցաղի հետ, նա միևնոյն ժամանակ շատ լաւ ուսումնասիրել էր և դասական թատերագրողներին։ Սունդուկեանը երիտասարդ հասակից իր առանձին ուշադրութեան առարկայ էր դարձրել Սկրիբին, Մոլիէրին, Շիլլերին, Գոգոլին, Գրիբոյէդովին, Օստրովսկիին, Շէքսպիրին ու Դիւմային և առանձին հետաքրքրութեամբ հետևում էր դրամատիկական ներկայացումներին դեռ իր ուսանողութեան օրերում։ Կլասիքների ուսումնասիրութիւնը ուժեղացրեց նրա մէջ տիպերի ուրուագծելու և հոգեբանօրէն արտայայտելու ունակութիւնը։

Եւ այդ հանգամանքը այն ուսանելի կողմերից մէկն է, որ տալիս է Սունդուկեանը մեր գրողներին, իբրև գրական ժառանգութիւն։

Ցեղոյ ուշք դարձրէք նրա հանդէս բերած տիպերի վրա։ Դրանք ոչ միայն արտաքին գծերով ձևակերպված անհատներ են, այլ և կրում են որոշ աշխարհահայեացքներ, որոշ հասարակական և կենցաղագրական դաւանանքների ներկայացուցչութեան կնիքներ։ Բանը Սունդուկեանը յետոյ, «Ամուսիններին» մէջ, երբ հաշիւ էր տեսնում ինտելիգենտ խաւերի կեանքի հետ, գործարից ընդհանուր գրական լեզուն, ընդգծելով դրանով այն հիմնական ուղղութիւնը, որով նա հետևում էր հաւատարիմ լինել իրականութեան։

Սունդուկեանի գրուածքները, եթէ լինէին միայն տիպերի և նրանց յատուկ որոշ աշխարհահայեացքների արտայայտութիւններ, կը ներկայանային իբրև աշող պատկերներ, ուրուագծեր։ բայց նա չը բաւականացաւ դրանով։ Նա ցանկացաւ այդ բոլոր տիպերը, աշխարհահայեացքները, տարբեր բնաւորութիւնները, լուսաւոր և խաւար երևոյթները կենսական շփման և ընդհարման ալիքների մէջ գցել և տալ կեանքի նկարագիրը իր գործողութեան, իր շարժման, իր պայքարի մէջ։

Եւ ահա այդտեղ Սունդուկեանը հանդիսացաւ իբրև մի քաղաքացի, որի համար էական էին կեանքի մէջ կատարվող երևոյթները, որի համար թանգ էր բողոքը ճնշումի, կեղծիքի, անբարոյականութեան դէմ։

Սունդուկեանը իւրաքանչիւր պիէսում, իր հերոսների բերանով, յայտնում է բողոքներ և անում է կոչեր գեղի աւելի լաւ կեանք։

Եւ նա այդ անում է ոչ արհեստական քարոզներով, ոչ բանաքօսիկ ձևերով, այլ հարազատօրէն ներկայացնելով կեանքի այն երևոյթները, որոնք իրապէս արտայայտիչ են հանդիսանում բողոքի և մրմունջի։

Եւ մի թանգագին գիծ, որ ունեն Սունդուկեանի երկասիրութիւնները, դա այն ներդաշնակութիւնն է, որ ունեն նրա գրուածքները ներկայացնելով վշտի, արիութեան հետ և նրա ուրախ կողմերը, ժողովրդական կեանքի մէջ անպառ սրամտութեան հումորի պաշարը, իրականութեան մէջ տեղի ունեցող թախիծների հետ միասին ծիծաղաշարժ հանդիպումների տարափը։ Սունդուկեանցի Գիքոն, Գիժ-Մօղին, Օսկան Պեսրովիչը և բազմաթիւ ուրիշ տիպեր թանգագին տարրերն են նրա երկասիրութիւնների։ Ծիծաղելին, զուարճալին ամենևին չէ թուլացնում ողբերգական ոյժը, և Գիքոն ամենևին չէ թուլացնում վշտի և տանջանքի ոյժը, այլ աւելի ևս զօրացնում և խտացնում է նրան։ Ծիծաղելին, սրամիտը, ծաղրականը կեանքի երևոյթների մէջ անբաժան ընկեր է և համապատասխան չափով մտնում է Սունդուկեանի ստեղծագործութիւնների մէջ։

Սունդուկեանը սահմանափակց իրան Թիֆլիսի կեանքով և Թիֆլիսից դուրս նա ոչ չը կոխեց դէպի գիւղական աշխարհը, դէպի գաւառական իրականութիւնը, դէպի ուսանողական կեանքը։ Նա գործ ունեցաւ այն երևոյթների հետ, որոնք նրա դիտողութեան համար շատ մօտ էին, ընտանի և խորապէս ըմբռնելի։ Բայց այն, ինչ որ նա տուեց, կրում է մինչ հարազատութեան և զգացմունքի։

Նա ապրում էր իր հերոսների կեանքով և նրա հերոսները նրա համար կենդանի անձնաւորութիւններ են։ Նրա համար Պէպոն մի իրականութիւն էր և այնպիսի մի իրականութիւն, որ նա ցանկացաւ տեսնել նրա արձանը, իբրև ամենամեծ արտայայտութիւնը իր փափաքների և իղձերի։

(Ա. Բալանթարը պատմել մի շատ բնորոշ դէպք Սունդուկեանի կեանքից, թէ ինչպէս նա կեանքի մէջ գտել է իր Պէպոյի տիպը)։

Սունդուկեանը ներկայանում է մեր առաջ իբրև մի ստեղծագործող, որը տուել է մեզ առաջնակարգ երկասիրութիւններ, որը բեղմնաւոր ճանապարհ է բաց արել հայկական թատերագրութեան համար և որը հանդէս է գալիս իբրև մեծ ուսուցիչ մեր երիտասարդ գրողների համար։

Սունդուկեանը, անկասկած, կը լինի լուրջ ուսումնասիրութիւնների առարկայ և նրա թողած ժառանգութիւնը կը մնայ մի թանգագին գանձ հայ կուլտուրայի համար։

Ցարդանք նրա յիշատակին, երախտագիտութեան ձօն նրա մեզ թողած անմահ ժառանգութեան։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ա.ակտիւական Երեկոյթ Գոգոլի յիշատակին

Գանձակ, 23 ապրիլի

Տեղիս քաղ. վեցդասեան դպրոցում, որ ունի 600 սան—որոնք կազմված են հայ, թուրք, ռուս ու վրացի ընտանիքի զաւակներից—վերջին տարիներս, շնորհիւ իր տեսչի ու ուսուցչական կազմի, կրթական գործը աշող առաջ է գնում և չանք չի խնայվում ընտանիքը կապել դպրոցի հետ, դնելով երեկոյթներ, հանդէսներ, մասնակցութեամբ զլխաւորապէս աշակերտների։

Ապրիլի 22-ին նոյն դպրոցի վարչութիւնը կազմակերպել էր աշակերտական գրական-երաժշտական երեկոյթ, որ նուիրված էր ռուս գրող Գոգոլի մահվան 60-ամեակի տարեդարձի յիշատակին։

Դպրոցի թատրօնական լայն ու ընդարձակ դահլիճը զարդարված էր բոլոր ռուս գրողների պատկերներով։ Դահլիճի դռների և բեմի կամարները պատված էին թարմ ճիւղերով։ Աշակերտներից ընտրված կարգադրիչ ու հիւրընկալ մասնախմբի անդամները ձգած ունէին իրանց կրծքին լայն ժապաւէններ, որոնք կրում էին կարմիր ու կապոյտ գոյներ։

Երգեցիկ խմբի անդամները կրում էին քնարաձև նշան, իսկ պարերի համար ընտրված սաները աստղանշան, որոնք զարդարվել միւս աշակերտներից ու հանդիսականներից՝ առանձին ուշք էին գրաւում։

Վարագոյրը բացվեց 8½ ժ. «Տէր պահեա զկայսր մեր» մաղթանքով։ Բեմի աջ կողմը դրված էր VI դաս. աշ. Բաղերովի նկարած՝ Գոգոլի մեծադիր պատկերը թարմ ծաղիկների շրջանակում. իսկ ձախ կողմը կանգնած էին երգեցիկ խմբին ու գրական մասին մասնակցող սաները։

Աշակերտ Սավենկօն Գոգոլի կենսագրութիւնը սահուն կերպով արեց, որից յետոյ երգեցին երգեր և արտասանվեցին ոտանաւորներ, որոնք զլխաւորապէս ընտրված էին Գոգոլի գրուածքներից։

Ապա ուսուցիչ Զարեքովը թուեց Գոգոլի մատուցած ծառայութիւնները Ռուսաստանին և վերջը կանգ առաւ նրա գրուածքների վրա, որոնցից բաւական թարգմանված են օտար լեզուներով։ Զարեքովը երկար կանգ առաւ հայ գրականութեան վրա ու մի քանի օրինակներով ցոյց տուեց, որ հայերը աւելի են օգտվում Գոգոլի թողած հարստութիւնով, քան միւս ազգերը, չը նայած նրա բոլոր գրուածքները մատչելի և մօտիկ են մեզ ու Ռուսաստանի բազմակրօն ու բազմալեզու ազգութիւններին։

Անվերջ ծափերի տակ Զարեքովը թողեց բեմը։

Սամենից վերջը տեղի ունեցան պարեր, որին հանդիսականներից ևս մասնակցողներ եղան։

Ընդմիջումների միջոցին հանդիսականներին մատուցվեց թէյ և քաղցրաւենիք ձրիաբար։

Հանդէսը վերջացաւ 12½-ին։ Հանդիսականները իրանց շնորհակալութիւնը յայտնելով տեսուչ Լէօնդինին և ուսուցիչներին՝ ուրախ տրամադրութեան տակ հեռացան դպրոցից։ Գր. Ք. Գորգեան

Վաս եղանակների ազդեցութիւնը

Գիւլպարակ (Լօռու շրջ.), 23 ապրիլի

Անժամանակ ձիւնի ու սառնամանիքի բուբբան ցրտերի վնասը մեզանում զգալի է։ Զօրացել են արտերի նորածիլ կանաչները, թէև հողի մէջ թաղված նրանց արմատները առայժմ զերծ են մնացել ցրտահարութիւնից, յոյս կայ, որ հացահատիկները նորից ուղղվեն։ Պակաս վնասներ չենթարկվեցին նաև շատ ծաղկած ծառեր։

Ամսիս 11-ից սկսած տեղացիք, կարելի է ասել մեր Լօռու շրջանը, կարօտ են պայծառ արևի, տաք օրերի ու տաք եղանակի։ Օրերը մեզանում անցնում են ամպամած։ Անձրևների գալը դեռևս շարունակվում է, և հողի փափկութիւնից ճանապարհները այն պատիճան վատացել են, որ անցուդարձը դժուար է կատարվում։ Թէև անձրևները մեծապէս նպաստեցին կանաչի բարձրանալուն, բայց ինչ օգուտ, որ ցեխի ու սառատիկ ցրտերի ձեռքից՝ ընտանի անասուններին տեղացիք միանգամայն դժուարանում են արօտ դուրս քշել։ Ուստի տխրված են փակած պահել գոմերում՝ մեծ մասը քաղցած, քանի որ տանը ալաֆ չը կայ։

Մեր մօտակայ սարերի բարձունքները դեռ թաղված են ձիւնով ու մշուշով։ Ոչխարների ծիրը, որ մեղանում սկսվել է վաղուց, այս տարի աշող է և ծնվածներից ոչ մէկը չէ վնասվում, իսկ ինչ վերաբերում է կովերի ծնելուն, այս տարվայ եղերոյթը մեզանում չը տեսնված նորութիւն է։ կովերը կամ բոլորովին չեն ծնում, կամ եթէ ծնում են՝ ծնած հորթերը չեն ապրում։ Այնպէս որ 8—9 կով ունեցողը, որ ամեն տարի նոյնքան ևս հորթ է ունեցել, այժմս հազիւ թէ մի երկու հորթ ունենայ։ Թէ ինչին վերագրել այս տխուր երևոյթը, տեղացիք դժուարանում են։ Ոմանք այդ ամենը վերագրում են աշնանը ժամանակի ժամանակ անասնաբոյժների շնորհիւ ժամանակից զերծ մնալու համար անասուններին տուած դեղերին։

Տեղացի Ալէքսան Գագիկեանը, նոր շինութիւն շինելու նպատակով քանդում է իր տան կից գտնվող անասունների խարխուլ գոմը, որի պատերի տակ կողքի վրա թաղված դիրքով գտնում է մի մարդկային կմախք իր բոլոր մասերով, մօտն էլ թաղված մի կճուճ։ Կմախքի ոչ մի մասը չէ վնասված և ենթակայ չէ փտման։ Գանգը բաւականին մեծ էր և երկարաձև։ Բոլոր ատամները տեղն էին և շատ առողջ։ Թէ քանի տարվայ կմախք է, չէ իմացվեց։ Բայց թաղման և գանգի ձևից կարելի է եզրակացնել, որ գտնվածը ոչ թէ քրիստոնեայի կմախք է, այլ ուրիշ դաւանութեան պատկանողի։ Կարօ Շեքեղեան

ՍՊԻՏԱԿ ԾԱՂԿԻ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Բաքու, 21 ապրիլի

Բաքուում Սպիտակ Ծաղկի օրը անցեալ տարվայ նման ոչ թէ ապրիլի 20-ին տօնվեց, այլ 21-ին, շաբաթ օրը, որովհետև 20-ին ուրբաթ էր, մահմեդականների հանդիսական օրը, որի պատճառով պարսիկների խանութները նախ փակ են լինում, որոնց թիւը քիչ չէ, և հասարակութեան մեծամասնութիւնը մզկիթներում աղօթում է։

Սպիտակ ծաղկի վաճառման կենտրոնը նշանակված էր «Մեարօպոլ» հիւրանոցը, որի շուրջը կեանքը եռում էր։

Առաւօտեան դեռ ժամը 8-ից մարդիկ հաւաքվել էին հիւրանոցի առաջ, ուր եկաւ քաղաքապետ Մարտինովը իր ամուսնու հետ։ Հիւրանոցի առաջ կանգնած էին բազմաթիւ աւտոմօբիլներ, կառքեր՝ սպիտակ ծաղիկներով զարդարված։ Ուղիղ ժամը 10-ին լսվեց երաժշտական խմբի նուագում. վաճառողների առաջին դասը բաղկացած էր աչքի ընկնող քաղաքացիներից ու միլիոնատէրերից. Թաղիանոսեան (բիրժայի կոմիտէի նախագահ), իշխ. Դատեան, Թումայեան (շուշեցի), Մուխտարով (պարսիկ), Լալայեան, Ադամեան, Միրզաբէկեան, Բրիանով, Կրասիլնիկեան, Ուսանեան և այլք, որոնք ամբողջ եռանդով պատում էին փողոցները։

Մինչև ժամը 12-ը փողոցները տօնական կերպարանք էին ստացել։ հասարակութիւնը թափօր կազմած ուղեկցում էր ծաղիկներ բաժանողներին, իսկ 12-ից յետոյ սկսեցին բաժան-բաժան պատել զանազան փողոցներում։ Տիկիններ, օրիորդներ թրուչ-կոտում էին մինչև անգամ ձիաքարշների մէջ, սիրալիր կերպով առաջարկում նրաստածներին, առանց ազգի, դասակարգի խտրութեան, և ոչ ոք չէր մերժում ընդունել և իր լուման ձգել արկղիկի մէջ։

Հարիւրաւոր մարդիկ, կանայք իրանց գործը թողած՝ այդ օրը իրանց նուիրել էին թոքախտի ճիրաններում տանջվողներին, մինչև երեկոյեան ժամը 8—9 շարունակ պատում էին։ Էլ կայարաններ, հիւրանոցներ, ճաշարաններ, հրապարակներ գնացքներ, նաւեր, մի խօսքով՝ ամեն տեղ գլուխ էին մտցնում։ Հասարակութիւնը ոչ միայն ընդունում էր ծաղիկը, այլ և շնորհակալութիւն էր յայտնում։

Այդ օրը անցայ նաւթանքային շրջանը։ Բալախանին էլ պակաս չէր քաղաքից. այդտեղ ևս փողոցները, նաւթահանքերը, հանքային գրասենեակները լիքն էին տիկիններով, օրիորդներով և պարոններով, որոնք արհամարհելով ծուխը, մուրը, հորերից շարունակ կաթկթող սև նաւթի շերտերը և շրջեմեքենաներից անձրևի նման շաղող ալի ջուրը՝ մանում էին համբաձակ, ժպիտները դէմքերին և հէնց առաջին պատահողին, բանւոր թէ կառավարիչ, մեկնում էին սպիտակ ծաղիկը։ Բանւորը, օրիորդի ձեռքից զգուշութեամբ վերցնելով ծաղիկը իր նաւթոտ ձեռքերով, վազում էր կաղարտա, բացում արկղը, հանում մի էլից կեղտոտ թաշկինակը և սև ու սպիտակ փողը ձեռին, մատների ծայրին բռնած՝ վազում և նետում էր արկղի մէջ։

Առանձին շնորհակալութեան արժանի էին Բալախանում ամուսիններ Ամիրանները։ Այդ ամուսինները առաւօտից Բալախանիի կայարանում նստած՝ գնացքից իջնող և գնացք մտնողներին, տոմսակ գնողներին մեկնում էին սպիտակ ծաղիկներ։ Ինչպէս տիկին Ամիրեանը, նոյնպէս և տիկնոջ ամուսինը ամբողջ օրը մօտենում էին քաղաք գնացող ու քաղաքից եկող բանւորներին, որոնց թիւը հազարների էր հասնում, և ուրախացնելով նրանց մեկնում էին ծաղիկներ։

Առանձին շնորհակալութեան արժանի են գործի կազմակերպողները, որոնք շաբաթներ շարունակ իրանց նուիրել էին գործին, ծաղիկներ պատրաստելուն։ Տիկին Մարտինովան (քաղաքապետի ամուսինը), տիկ. Նազանսկայան (քաղաքապետի օգնականի կինը), Սոֆիա Ադամեանը և տիկ. Դուլնովան ամբողջ օրերով հիւրանոցում հսկիչներ են եղել պատրաստվող ծաղիկների նրբութեան և վաճառման վրա։

Վաճառողներից շատերը հաւատացնում են ինձ, որ ընդհանուր մուտքը 15,000 ռուբլի պիտի լինի, որովհետև հասարակութիւնը լինքն էր կանգնեցնում և նուէր տալիս։

Եղանակը վատ չէր։

Ս. Գարագաշ

II

Սիմֆերօպոլ, 21 ապրիլի

Ամսիս 20-ին, Սպիտակ Ծաղկի օրը, եղանակը մեզանում շատ լաւ էր, ուղղակի գարնանային։ Այդ հանգամանքը մեծապէս նպաստեց տօնի աշող կատարմանը։ Աւտոմօբիլներն ու կառքերը, զոյզզոյն գեղեցիկ ծաղիկներով զարդարված, պլանում էին փողոցներով՝ ծաղիկներ բաժանելու...

Պէտք է ասել, որ այս տարի աւելի եռանդով էին գործի կպել և ծաղիկներ ծախողների թիւը՝ անցեալ տարվանից շատ ստուար էր։ Այնպէս որ այս տարի սպիտակ ծաղիկների վաճառքի եկամուտը շատ աւելի պէտք է լինի, քան անցեալ տարվանը։

Սիմ. Գրիկեան

III

Սղնախ, 24 ապրիլի

Ամսիս 20-ին Սպիտակ Ծաղկի օրը Սըղնախումն էլ տօնվեց քաղաքիս առաջաւորների զլխավորութեամբ։ Ա. Ք. Տ.-Ս.

IV

Կրասնօվոդսկ, 24 ապրիլի

Սպիտակ Ծաղկի տօնը մեզանում կատարվեց երէկ, ամսիս 23-ին։ Այդ տօնը մեզանում կատարեալ նորութիւն էր։ Նրա նիւթական աշողութիւնը պայմանական էր և դեռ յայտնի չէ, թէ հանգանակված գումարը որքանի է հասել։ Խանումոնց

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 28 ապրիլի

Կարդացվում է ներքին գործերի մինիստրին ուղղված՝ սոցիալ-դեմոկրատների շտապ հարցապնդումը։ Պետերբուրգի վարչական պաշտօնեաների ապօրինի գործողութիւնների առիթով, որոնց հետևանքը եղաւ այն, որ լոյս չը տեսան «Правда» և «Живое Дѣло» թերթերի հատորները։

Պոկրովսկի 2-րդ պաշտպանում է շտապողականութիւնը, մասնաւորապէս որ վարչական պաշտօնեաները բանւորական լրագիրներին հալածելու ժամանակ ամեն չափ ու սահմանից անցան։ Լրագիրները շարունակ ենթարկվում են զրամական տուգանքի կամ գրաւվում են, խմբագիրները հարաբերաւորապէս կերպով նստած են ոստիկանատներում։ Անտես անելով բանւորների շահերը, զուտ այական մեծամասնութիւնը բորբոքում է բանւորական շարժումը։ Հետևօրը յոյս է յայտնում, որ Պետերբուրգի բանւորները, տօնելով միջազգային պրոլետարիատի տօնը, կը պահանջեն լիակատար քաղաքական ազատագրում ու խօսքի և ժողովի անսահմանափակ ազատութիւն։

Զամբսլօվսկին, առարկելով շտապողականութեան դէմ, ժխտում է հարցապնդողների այն խօսքերը, թէ կառավարութիւնը հալածելով բանւորական լրագիրները միևնոյն ժամանակ սանձարձակում է աջակողմեան մամուլը։ Հետևօրը մի շարք օրինակներ է բերում կիևի իշխանաւորների գործունէութիւնից, որոնք ամեն միջոցներով արգելք են լինում աջակողմեան կազմակերպութիւններին՝ քանալ Իշչենսկիի գործունէութիւնը։ Զը պէտք է մոռանալ, որ «Правда»-ն և «Живое Дѣло»-ն հանդիսանում են սոսկ «Звѣзда»-ի յաւելուածներ, որի հրատարակութիւնը դադարեցված է դատարանով։

Գեգեչկօրին կարծում է, որ ապօրինութեան բոլոր տարրերը անիրկայ են և ուստի հարցապնդումը պէտք է ընդունվի, եթէ Դումայի մեծամասնութիւնը անտես չէ առնում բանւորների շահերը։

Շտապողականութիւնը մերժվում է 112 ձայնով ընդդէմ 60-ի։ Հարցապնդումը յանձնվում է մասնաժողովի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը հետևեալ շնորհաւորական ուղերձն է ուղարկել դերասանապետ Մնակեանին նրա 50-ամեայ բեմական գործունէութեան յօբելեանին. «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը հրճուանօք ողջունում է քանքարաւոր արտիստ Մարտիրոս Մնակեանի 50-ամեակը, խնդակցում է, որ բնաձին տաղանդը իր չարքաշ աշխատանքով կերտ ու մրի իր միջավայրից բարձրանալով-բարձրանալով հասաւ մինչև եթեր երկինք և այսօր ցոյց է նա իրրև մի պայծառ աստղ, ապացոյց՝ որ սուրբ աշխատանքի և տաղանդի առաջը չեն կարող կտրել ոչ քաղց ու ծարաւ, ոչ շղթաները բռնակալի և ոչ էլ արհամարհանքը դառոյ մեծատան։ Ցարգանք գեղեցկի, սիրոյ և ճշմարտութեան տաճարին 50 անխոնջ տարիներ պաշտամունք կատարող արտիստ Մնակեանին։ Երկար պայծառ շատ տարիներ յօբելեար Մարտիրոս Մնակեանին»։

✦ Կովկասի Փոխարքան թոյլատրեց ներկայացնել «Վասակ Սիւնի» պատմական 5 գործ. պիէսը, հեղինակ. Ա. Նեմիկեանի։

✦ Առաջիկայ շաբաթվանից Թիֆլիսի քաղաքային դումայի նիստերը տեղի կունենան շաբաթը երկու անգամ, որովհետև յունիսից յետոյ իրաւասուները ցրվում են և դուման դժուար է հաւաքվում։

✦ Թիֆլիսի վաճառականների մի խումբ միտք է յղացել Թիֆլիսում բանալ վաճառականական բանկ։ Ծխախոտ արդիւնաբերող եղբ. Բօզարջիանները այդ գործին յատկացնում են 100,000 ռուբլի։

✦ Թոյլատրված է Բաքուի նահանգում բանալ վարկային երեք նոր ընկերութիւններ։

✦ Կ. Հ. Բար. Ընկերութեան գանձիճում ապրիլի 29-ին, ցերեկ. ժամը 12-ին տեղի ունեցաւ Կ. Հ. Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը՝ Տ. Յովհաննէսեանի նախագահութեամբ և մասնակցութեամբ 20 անդամների։ Կարդացվեց վարչութեան գործունէութեան հաշուետուութիւնը, խմբագրական մասնաժողովի տեղեկագիրը և հաստատվեց առաջիկայ տարվայ նախահաշիւը։ Քննութիւնները յետաձգվեցին գալ անգամին։ Ժողովի շարունակութեան մասին կը յայտարարվի լրագիրներում։

✦ Ապրիլի 28-ին քաղաքային տեխնիկները քաղաքագլխի գլխաւորութեամբ դիտեցին նոր տպանցանոցը։

✦ Ն. Աբրահամեանի հաշուապահական դասընթացքներում աւարտական քննութիւնները կը սկսվեն մայիսի 19-ին և կը վերջանան մայիսի 23-ին։

✦ Ապրիլի 28-ին ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց Կ. Կոլոմնայի տպարանում։ Հակաօրինական ոչինչ գտնվեց։ Զերբակալվեց մի գրաշար։

✦ Մեծ-Ղարաքիլիսայում ապրիլի 27-ին ձիւն է եկել։ Ձիւն է եկել նաև Կոլօրում և շրջակայքում։

✦ Քաղաքային վարչութիւնը Հալաբաբի թաղամասերից մէկի լուսաւորութեան գործը յանձնել է «Պոլակ և Ընկերութիւնը»։

✦ Թիֆլիսի երաժշտական դպրոցի դահլիճում այսօր կը կայանայ գնչուական երգերի յայտնի երգչուհի Նինա Դուլկեվիչի համերգը։

✦ Այսօր, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, դերասան Արմէնեանի խումբը կը խաղայ «Գիւղական օֆիցէր» կոմէդիան։

✦ Կ. Հ. Բար. Ընկ. խորհուրդը ուղարկել է Ընկ. միջոցներից 400 ռ., որից 200 ռ. Կարսի ճիւղի վարչութեանը, 200 ռ. Բաթումի ճիւղի վարչութեանը՝ թիւրքահայ գաղթականներին հայրենիք վերադառնալու ճանապարհածախքերը հոգալու համար։

✦ Կիրակի օրվանից Թիֆլիս-Մցխէթի միջև սկսեցին գործել երկաթուղու ամառային գնացքները։

✦ Մօտ ապագայում Քութայիսում իշխ. Լ. Դաղէշկիլիանի խմբագրութեամբ կը սկսէ լոյս տեսնել մի շաբաթաթերթ, «Ախալի Մօսմբէ» (Նոր համբաւաբեր) անունով։

✦ Երէկ, ապրիլի 30-ին, վրաց յայտնի կին-գործիչ Մարիամ Դէմուրիայի յիշատա-

կէն ժողովրդական Տան թատրոնում տրվեց մի ներկայացումն, վրացերէն լեզուով։ Խաղցվեց Տրիֆոն Համշվիլիի «Խելագար» պիէսը։

✦ Վրաց դերասան Վլ. Ալէքսի-Մեսխիեվը իր խմբով տուրնէ կը կատարէ, Արևմտեան-Վրաստանի այլևայլ վայրերում ներկայացումներ կազմակերպելու համար։

✦ Վրացի գրողներ Գիորգի Լասխիշվիլին և Եռասն Փիրցխալավային, որոնք վարչական կարգով աքսորված էին Բաստավ-Դոնի քաղաքը, ինչպէս հաղորդում է վրաց «Թեմի» թերթը, թոյլատրված է առաջինին ապրել Բագուում, իսկ երկրորդին Վլադիկավկազում։

✦ Վրաց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը որոշել է իր վաղեմի մտադրութիւնը ի կատար ածել, այն է՝ հիմնել դրամատիկական դասընթացքներ։ Այս գործը գլուխ բերելու նպատակով մօտ օրերս կը գումարվի խորհրդակցութիւն վարչութեան անդամների և ձեռնհաս անձանց։

✦ Քանդակագործ Իակօբ Նիկոլաձէն մօտ օրերս կը մեկնէ Պարիզ, իր աշխատանոցում պարապելու համար։

✦ Խուզարկու ոստիկանութիւնը ապրիլի 28-ին Թիֆլիսում ձերբակալեց աքսորից ինքնակամ վերադարձած Գարեգին Թարխանեանին, որը մի սպանութեան համար երեք տարվայ բանտարկութեան դատապարտվելով՝ ապա աքսորված էր վարչական կարգով Դոնի Բաստավ քաղաքը, որտեղից մի քանի անգամ ինքնակամ վերադարձել էր Թիֆլիս և կրկին ուղարկվել իր աքսորավայրը։

✦ Խուզարկու ոստիկանութիւնը ձերբակալեց ոմն Մգալօբլիշվիլին, որը առանց պատշաճաւոր թոյլատրութեան զէնք էր պահում։ Ատրճանակը խլված է, իսկ նա ենթարկվում է պատասխանատուութեան։

✦ Ապրիլի 28-ին, երեկոյեան ժամը 10-ին, Սուրբամսկայա փողոցում գտնվեց իգական սեռի ընկեցիկ մի երեխայ, ըստ երևոյթին 5 ամսեան։

✦ Խուզարկու ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարելով Թիֆլիսեցի Գէորգ Մանուչարեանի բնակարանում՝ գտաւ նրա մօտ գանազան տեսակի զէնքեր։ Մանուչարեանը չունէր պատշաճ իրաւունք զէնք կրելու կամ պահելու համար։

✦ Ապրիլի 27-ին Բաթիշչէվսկայա փողոցում գտնվեց ընկեցիկ մի մանուկ, որը, իր մօտ գտնված նամակի բովանդակութեանը նայելով, մկրտված է եղել։

✦ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆօնդի հետևեալ գումարները. Ցխինվալի ծխ. դպրոցի աւ. ուսուցիչ Հ. ք. Օհանեանից տեղումը հաւաքած մարկաներով 35 ռուբլի, Գրօզնայից ծխ. դպրոցի հոգաբարձու Գր. Գուրգէնեանի միջոցով 14 ր., Թանդոյեան դպրոցի հոգաբարձական և ուսուցչական կազմից Ա. Նազարէթեանի միջոցով 25 ր., Սիմֆերօպոլի Ե. ք. Նալբանդեանից տեղի ծխ. դպրոցի ուսուց. խմբի կազմակերպած ներկայացման արդիւնքը 178 ր. 91 կ., Ղօլաբէգի ծխ. դպր. ուս. Դ. Վարդապետեանի միջոցով 1 ր., Ալէքսանդրօպոլից ուս. Աւ. Տէր-Պողոսեանի միջոցով Արղութեան դպրոցի ուսուցչական կազմից 13 ր., Ղազախի հայոց դպրոցի ուսուցչից 3 ր., հաստակութիւնից 4 ր., Երևանի և Զանգիբասարի գործակալ Ս. ք. Աբրահամեանի միջոցով 14 ր., Նուխու ճիւղից 9 ր. 50 կ., Գեադուկ-Սաթլմիշ գիւղի դպրոցի ուսուցիչ Մ. Տէր-Ցարութիւնեանի միջոցով 15 ր., Բէգ-Զազալի ծխ. դպր. աւագ ուս. Մկրտիչ Աղաբաբեանի միջոցով 8 ր. 30 կ., Սուխումից ուս. Գրիգոր Պալեանի միջոցով 15 ր. 30 կ., Ախալքալաքի Կարզախ գիւղի ուսուցիչ Հմ. Այվազեանի միջոցով 16 ր., Ցղնայից Դ. Մալեանի և Մ. Ստեփանեանի միջոցով 1 ր., Իգդիրի դպր. հոգաբարձութիւնից 12 ր., Բաթումի ճիւղից Մ. աւ. ք. Մելեանի միջոցով 25 ր., Ռնդամալի հայոց դպր. հոգաբարձութեան միջոցով հաւաքած 7 ր. 12 կ., Սամարղանդի քահանայից 40 ր., Գէորգիևսկի հայոց դպր. ուս. Վ. Իսկանդարեանի միջոցով հաւաքած 12 ր., Գարգարի դպր. ուս. Ա. Բալեանի միջոցով հաւաքած 3 ր. 45 կ., Մեղրիի շրջանի գործակալի միջոցով Կալեր, Կարճևան, Կաքաւաբերդ, Վանք և Շիրվանիձոր գիւղերում ժողովված 11 ր. 10 կ., Երնջակի գործակալի միջոցով Ապրակունիս, Զուղա և Շոռութ գիւղերում ժողովված 16 ր. 20 կ., Գողթնեաց գործակալի միջոցով Բաղաբիկ գիւղում ժողովված 29 ր. 50 կ., Նախիջևանի գործակալի միջոցով Շեմահմուդ և Դարաբէգլու գիւղերից 5 ր., Սուխումի շրջանի Զիկերդէ գիւղի հայ հասարակութիւնից աւ. ուս. Մ. Ազատեանի միջոցով 60 ր., Եղնէ Ռուստամանի միջոցով հանգանակած Բ. Արզումանի ծառայողներից 10 ր. 35 ր.։ Եղբ. Բոզաջեաններից ստացված է ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր 200 ռուբլի։

✦ Կրասնօվոդսկից մեզ գրում են, որ կիրակի, ապրիլի 22-ին, այնտեղի հայոց եկեղեցում, պատարագից յետոյ, Արմէնեան-Սեուսեան դերասանական խմբի և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ կատարվել է հոգեհանգիստ հանգուցեալ Գ. Սունդուկեանի մահվան քառասունքի առիթով։ Ծխ. դպրոցի ուսուցիչ Վ. Աֆրիկեանը խօսել է Սունդուկեանի գրական գործունէութեան մասին։

✦ Վրիպակ.—«Մշակի» № 90-ի առաջնորդողում տպրդել է հետևեալ սխալը. Թերթի առաջին երեսի երրորդ սիւնակի 9-րդ տողից սկսած (ներքևից հաշված) տպված է՝ «Այդ տրադիցիան եղել է և է՝ ծառայութիւն, լուսաւորութիւն, մարդկային անընդհատ առաջադիմութիւն՝ հայ ժողովրդի...» և այլն. պէտք է լինի՝ «Այդ տրադիցիան եղել է և է՝ ծառայութիւն լուսաւորութեան, մարդկային անընդհատ առաջադիմութեան՝ հայ ժողովրդի...» և այլն։

ՄԱՑՐԱՌԱՂԱՌԻ ԹԵՐԹԵՐԻՑ

✦ Գերմանացի գիտնականը Մոսկվայում.—Բերլինի համալսարանի պրոֆ. յայտնի վիրաբոյժ Թէոդոր Կրաուզէն հրաւիրված է Մոսկվայում բարդ ու վտանգաւոր ուղեղային օպերացիա անելու Մոսկվայի արդիւնաբերող ու քաղաքացիական գործող Բ.-ի մօտ։ Պրօֆ.-ն ասում է, ի միջի այլոց, թէ «ռուս և գերման գիտութեան միջև կան շարունակ յարաբերութիւններ։ Ռուս գիտնականները շարունակ գործում են Բերլինի հիւանդանոցներում ու կլինիկաներում, ուր ամեն կողմից հիւանդներ են գնում։ Բացի դրանից՝ Բերլինի մօտ 4 միլիոն բնակչութիւնը տալիս է բաւական քանակութեամբ հիւանդներ՝ ուսումնասիրութեան համար շահագրգիռ։ Եւ պէտք է ասել, որ ռուս վիրաբոյժութիւնը այնքան էլ պակասաւոր չէ գերմանականից։ Եօթնեորդ անգամն է, ինչ գալիս եմ Ռուսաստան, ամեն անգամ փորձում եմ սովորել ռուսերէն, բայց վերադառնալով Գերմանիա՝ բոլոր սովորածս մոռանում եմ։ Դժուար լեզու է»։

✦ Օգոստոսեան ծախսերը Մոսկվայի եկեղեցականութեան վրա. — Մոսկվայի միտրոպոլիտ Վլադիմիրը մի շրջաբերականով կարգադրել է, որ մայրաքաղաքի մօտ 800 ռուս եկեղեցիների իւրաքանչիւրից, թափօրի ժամանակ, մասնակցի մի քահանայ, մի սարկաւագ ու մի դպիր։ Քահանաների ու սարկաւագների շուրջպատերն ու ժամազարդիները պէտք է լինեն կարմիր թաւշից, իսկ դպիրներինը՝ կարմիր մանչեստրից։ Այս բոլորի վրա մօտաւորապէս ծախս է գնալու ընդամենը մօտ... 200,000 ռուբլի։

✦ Մոսկվայի գիտական ինստիտուտը կամ «ազատ ակադեմիան».—Մոսկվայի քաղաքային առանձին ատեանը որոշել է հիմնել գիտական ինստիտուտ, որտեղ ռուս գիտնականները կարողանան կատարել իրանց գիտական աշխատանքները, չընդհատելով այնպիսի պատճառներով, որոնք ոչինչ կապ չունեն գիտութեան հետ։ Գիտական ինստիտուտի հարցը բացառապէս լինելու է գիտական և ոչ դպրոցական։ Ինստիտուտի շնորհներից կարող են օգտվել միայն գիտական գործողները՝ գիտական հետազօտութիւնների համար։ Այնտեղ լինելու չեն աշակերտներ կամ ունկնդիրներ, այլ կը լինեն միայն հետազօտողներ։ Սա լինելու է մի հիմնարկութիւն՝ նման գիտութիւնների ճեմարանին, ինչպէս Պատերի ինստիտուտը Պարիզում։ Մոսկվայի գիտական ինստիտուտի ընկերութիւնը հիմնվում է փայերի վրա։ Ընկերութեան անդամ կարող է լինել ամեն մարդ, ով համակրում է նրա նպատակներին, այն պայմանով միայն, որ վճարի 50 ռուբլի։ Իսկ ինստիտուտի անդամները լինելու են միայն գիտական գործողներ։ Զուսնենալով որևէ քաղաքական ձգտում, նա սահմանվում է լոկ զուտ գիտութեան համար։ Այս հողի վրա կարող են միանալ ամենքը։ Մի քանի օրվայ ընթացքում Մոսկվան տուել է այդ հիմնարկութեանը 200,000 ր.։ Շատ հարուստ մոսկվացիք խոստացել են տալ խոշոր նուէրներ, հէնց որ հաստատվի կանոնադրութիւնը և սկսվի ինստիտուտի շէնքը։ Գիտական ինստիտուտի ձեռներէցներն են՝ ի միջի այլոց՝ պրոֆ. Ի. Ի. Մեչնիկովը, Ն. Ա. Ումովը, Ն. Ա. Շախովը և մի շարք պրոֆեսորներ ու հասարակական գործողներ։ Նոր ընկերութիւնը իրան նպատակ է դրել՝ հիմնել ֆիզիքական ինստիտուտ, կենսախոսական ու քիմիական աշխատանոցներ՝ այն հաշվով, որ կարողանան զբաղվել այնտեղ մօտաւորապէս 75 գիտնական։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Քննութիւնը պարզեց, որ ոչ մի մահափորձ չէ որոշված եղել Ժող. լուսաւորութեան մինիստր Կասսօյի կեանքի դէմ։ Թունաւորված աղջիկը գործարանի աշխատաւոր է և հետամուտ էր սիմուլիցայով փառքի տիրանալ։

✦ Լէնայի դէպքերի առիթով հարց է բարձրացված այսուհետև ամբոխին զսպել հեծելազօրի օգնութեամբ, որ, հակառակ հետևակ գնդի, չէ կրակում։

✦ Պետերբուրգում Սպիտակ Ծաղկի օրը հանգանակվեց 105,342 ր. 91 կ.։

✦ Սպիտակ Ծաղկի օրը Մոսկվայում հանգանակվեց 155,000 ռուբլի։

✦ Ապրիլի 27-ին Պետերբուրգում ճաշ եղաւ 1-ին Դումայի անդամների մասնակցութեամբ։ Այդ օրը մի քանի տեղերում հոգեհանգիստներ կատարվեցին 1-ին Դումայի նախագահ Ս. Մուրոմցեվի յիշատակին։

✦ Սենատը անհետևանք թողեց Բագուում հրատարակվող «Совр. Жизнь»-ի խմբագիր Լ. Օհանջանեանի վճռաբեկ բողոքագիրը։ Համաձայն դատ. պալատի վճռի՝ Օհանջանեանը աքսորվելու է Սիբիր ցմահ։

✦ Ռուսաց զինուորական մինիստրի կարգադրութեամբ օֆիցէրների մասնաժողով ուղարկվեց Ֆրանսիա՝ զինուորական գործի հետ ծանօթանալու համար։

✦ Պարզվում է, որ Բագուում Թաւլիշանօվի գործը յետաձգվեց այն պատճառով, որ նախնական քննութեան ժամանակ ամենակարևոր փաստաթուղթը անյայտացել էր։ Ցափշտակութիւնը սենսացիա է առաջ բերել դատական շրջաններում։

✦ Եվրեմը նախ քան ապստամբ ցեղերի դէմ գնալը կանգ է առնելու Ղազվինում, նպատակ ունենալով իր կողմը թեքել տեղական դաշնակցականներին։

✦ Սալար ուդ-Դովլէի տարած նոր յաղթութեան առիթով ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ յայտնում են, որ ռուսաց կառավարութիւնը Պարսկաստանի նկատմամբ կը շարունակէ մնալ չեզոք և կը միջամտէ այն ժամանակ միայն, երբ վտանգ կը սպառնայ ռուսական շահերին։

✦ Ամբողջ Իտալիայում տեղի են ունենում միտինգներ պատերազմի դէմ։

✦ Նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Թիւրքիան չէ բանում Դարդանէլը այն պատճառով, որ հաստատ տեղեկութիւն ունի, թէ իտալական ռազմի նաւատորմը նոր գործողութիւնների է դիմելու Եգէյեան ծովում։

✦ Թիւրքերը Բօդօսում մեծ նեղութիւն են պատճառում իտալացիներին յարձակվելով առ ժամանակ լեռներից։

✦ Թիւրքաց տեղեկութիւնների համաձայն, թիւրքերը Բօդօսում մի կուռ մէջ սպանել և գերել են 2000 իտալացու։

✦ Երիտասարդ թիւրքերը տարածում են գրգռիչ լուրեր, թէ իբր Ռուսաստանը պահանջելով Բ. Դոնից վճարել Դարդանէլը փակելուց առաջ եկած վնասները՝ ուզում է դրանով միջադէպ ստեղծել Թիւրքիայի հետ։

✦ Ալբանիայում և Հին-Սերբիայում դրութիւնը կրիտիկական է համարվում։ Ապստամբ տեղերը շարունակ դիմում են թիւրքական զօրաբանակներ։

✦ Թիւրքական «Սաբահը» հաղորդում է, որ իտալական մի ուժեղ նաւատորմ կանգնած է Սալոնիկի ծոցի մօտ։

✦ Դարդանէլը ականներից վերջնականապէս մաքրելու աշխատանքները կը տևեն ուղիղ երկու շաբաթ։

✦ Ցէտինիէից հեռագրում են, որ Նիկոլայ թագաւորը ծանր հիւանդ է։

✦ Դրութիւնը Մարոկկոյում չափազանց լուրջ է։

✦ Մարոկկոյում սպասվում է ընդհանուր ապստամբութիւն։ Էլկասրի մօտերը շէրիֆի գնդերը ֆրանսիացի հրամանատարների հրամանատարութեամբ թիւրիմացութեամբ յարձակվեցին գերմանական մի ֆիրմայի վրա։ Այդ հանգամանքը գերմանացիք աշխատում են ծառայեցնել իբրև առիթ ֆրանս-գերմանական միջադէպի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.
28 ապրիլի

ԲԵՐԼԻՆ։ Բիւջէտային մասնաժողովը մի բանաձև ընդունեց, որ ուղղված է մենամարտը ոչնչացնելու գործի մէջ։

ՆՈՐ-ՕՐԼԷԱՆ։ Լուիզիանա նահանգի հեղեղված մասի դրութիւնը կրիտիկական է։ Շատ փողոցներ ջրի տակ են։

ՊՕՐ-ԴԷ-ՆՕՆԷ։ Պօրուէիկ Դէպրեսիսը օդաշնացութեան դպրոցում ընկաւ աէրոպլանից և մեռաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լուսաւորութեան մինիստրութիւնը մշակում է օրինագիծ այն մասին, որի համաձայն միջնակարգ դպրոցների սանները պարտաւորապէս սովորելու են նոր լեզուներից մէկը՝ գերմաներէն կամ ֆրանսերէն։

Եկաւ ամերիկեան պատուիրակութիւնը, որ նպատակ ունի հրաւիրել ռուս կառավարութեանը մասնակցելու 1915 թ. միջազգային ցուցահանդէսին, որ լինելու է Սան-Ֆրանցիսկօյում։

29 ապրիլի

ԲԱԳՈՒ։ Կայսերական տեխնիկական ընկերութեան Բագուի բաժանմունքը բացեց ներքուստ վառվող շարժիչների միջազգային ցուցահանդէս։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Ֆինանսների մինիստրի օգնական Նովիցկին մեկնեց Կովկաս՝ ներկայ լինելու տեղական զինագործների համագումարին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Բեչ» լրագիրը ապրիլի 26-ի առաջնորդող յօդուածի համար ենթարկվեց 350 ռուբլի տուգանքի։

«Торгово-Промышленная Газета»-ն հաղորդում է, որ գիտութեանց ճեմարանին կից կազմված մասնաժողովը աստղագէտ Գրիբօեդովի գուշակութիւնների գիտական արժէքը պարզելու համար, որ նրա գուշակութիւնները չունեն գիտական նշանակութիւն և վստահութեան արժանի չեն։

ԿԱՍՍԷԼ։ Օդագնաց Շմիդուլսկին ընկաւ 100 մետր բարձրութիւնից և մեռաւ։

ՄԱԴՐԻԴ։ Ալդէա Նուէվի 600 բնակիչ, ներս խուժելով քաղ. ինքնավարութեան շինութիւնը, ուր համաձայնական խորհուրդը քննում էր հարկերի հարցը, ծեծեցին խորհրդի անդամներին և արխիվը այրեցին։ Ալդէա-Նուէվա մեկնեցին ժանդարմական խմբեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՆՉՊԷ՞Ս ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, օրինակ՝ խօլերայից, տիֆից, քութէշից, ծաղկից, կարմրուկից, սիֆիլիսից, քոսից։ Առաջին պայմանը՝ այդ նպատակին հասնելու համար, խիստ մաքրութիւն պահպանելն է։ Հարկաւոր է, գոնէ, ամեն անգամ ուտելուց առաջ ոչ միայն լուանալ ձեռքերը, այլ և նրանց ախտահանել, որի համար յարմարագոյն միջոցն է, որ նշանակված է վարակիչ հիւանդութիւնների դրդիչների դէմ, **«№ 4711 ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՊՕՆԸ»։**

Գործադրութեան իսկական եղանակը (ռուսերէն և գերմաներէն լեզուներով) կցված է իւրաքանչիւր կտորին։

Առանձնապէս առաջարկվում են՝ «№ 4711 Կարբոլեան Սապօնը» (պիտանի է նաև հիւանդների սպիտակեղէնների լուացումի ժամանակ), «№ 4711 Դեգտեար Սապօնը» և «№ 4711 Սուլֆային Սապօնը»։

«№ 4711 Բժշկական Սապօնը» կարելի է ստանալ բոլոր դեղատներում, դեղավաճառ և պարֆիւմերիային խանութներում, իւրաքանչիւր կտորը տասն կոպէկից սկսած։

Գնելու ժամանակ պէտք է ուշադրութիւն դարձնել, որպէսզի իւրաքանչիւր կտորի վրա լինի «№ 4711»։ Միայն նա է տալիս գարանտիա սապօնի լաւ յատկութեան համար։

(21.9.30) (M. 183985) 4—1

7—2 (П. 61879)

ԲԺՇԿԱԿԱՆ ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Семеновская ул., № 9. Ժամը 3—4-ը։

Ա. ԵՍԱՅԵԱՆ
ԳԱՂՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
բազմաթիւ խորհուրդներով, ըէցեպտներով և նկարներով. գինը 50 կօպ. ճանապարհածախսը 15 կ. մարկաներով։ Բժշկարանը պատանդողներին ՁՐԻ, իբրև պրեմիա, միաժամանակ կուղարկվի նոր լոյս տեսած ծիծաղաշարժ վէպը՝ «ԿՆԻԿԱՐՄԱՏԻ ՁՕՎԱՐԸ» (առանձին՝ գինն է 20 կօպ.)։
Դիմել՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Артемію Есаянцу.
(Հ.Հ.Կ.) 287. 50—2

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական վենեռական և կաթուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէքուսօվսկայա, № 33 (անկիւն Պասկևիչի փողոցի)։ Տելէֆօն № 1175.
(Հ. Հ.Կ.) 888. 100—95

Լոյս տեսաւ և վաճառվում է
„ԳԱՐՈՒՆ“
Քննադատական Ալմանախը
Գիրք Գ. էջ 376.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
1) Կուսիկեան Կ.—Հանճարեղ սիրտ (Ն. Աբովեան)։
2) Ալ. Ռուբէնի.—Սմբատ Շահազիզ։
3) Դ. Անանուն.—Անցեալի մեծարանը (Ե. Թումանեան)։
3) Ե. Խանզադեան.—Աւետիս Ահարոնեան։
5) Ալ. Մարտունի.—Ե. Ցովհաննիսեանի և Ալ. Ծատուրեանի բանաստեղծութիւնների հասարակական արժէքը։
6) Պ. Մակինցեան.—Դիմագծեր I. Ե. Թումանեան, Աւ. Իսահակեան։
Գինն է 1 ր. 50 կ., վեր. վճարով 1 ր. 75 կ.
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ
„Գարուն“ գր.-գեղարուեստ. ալմանախների Ա. և Բ. գրքերը։
Իւրաքանչիւրի գինն է 1 ռուբ.
«ԳԱՐՈՒՆԻ» Ա. և Բ. գրքերին մասնակցել են՝ Ահարոնեան Ա., Անտիեան Ռ., Արսէն Երկաթ, Բաղէն, Բաբեան Ս., Դեմիրչեան Դ., Իսահակեան Ա., Ծատուրեան Ա., Կուրղինեան Շ., Մազմանեան Հ., Մանուէլեան Մ., Միքայէլեան Կ., Ցակոբեան Ց., Նազարեան Հ., Շիրվանզադէ, Շանթ Լ., Չիֆթէ-Սարաֆ, Պարսամեան Մ., Պետրոսեան Մ., Սեուկ, Սիրունի, Սուրէն, Տէրեան Վ., Տիգրանեան Ա., Փայլակ, Փափազեան Վ. և Քիւֆեֆեան Ց.։
Մօսկվա գիմողների համար երեք գիրքը միասին ճանապարհածախսով և վեր. վճարով արժէ 3 ռուբ.։
Հասցէ՝ Москва, Б. Дмитровка, 9, кв. 50. К. Микаэляну.
(Ե.) 278. 7—2



Главный складъ у Торговаго Дома Робертъ фонъ ШВАРЦТАЛЬ и К°, Одесса.
(M. 466890) 8—7

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՑԻՆԿՕԳՐԱՓԻԱՆ
ընդունում է ցինկոգրաֆիական կլիշէների պատուէրներ և պատրաստում է ժամանակին, մաքուր և մատչելի գներով։
(Թիֆլիս, Վանքի Մեծ փողոց)։
(Ե.) 290. 2—2

ՉՈՒԳՈՒՆ ՉՈՒԼՈՂ ԵՒ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Գ. Զ. ԵԱՐԱԼՕՎ ԵՒ Կ° ԱԿՑ. ԸՆԿ.
Թիֆլիսում, Կվիրիլսկայա փող. № 7, Անդրկով. երկ. վաչ. մօտիկ։
Ընդունում է պատուէրներ՝ կառուցումների, փականագործական (слесарныя), կաթսային, դարպասային, խաւատային և զանազան մեխանիկական աշխատանքների համար։ Ընդունում է նոյնպէս պատուէրներ չուգունէ և պղնձէ ձուլուածքների՝ համաձայն տրված մակարդակների և կաղապարների։
Պատուէրներն ընդունվում են միանգամայն մատչելի գներով։
Գործարանը պատրաստում է նաև պարտիզի կահ-կարասիներ։
Նոյն տեղը վաճառվում են երկու զանգ՝ մէկը 38 պ. 35 ֆ., միւսը 24 պ. 34 ֆ.։
(Հ. Կ.) 261. 10—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.